

# ԼՈՒՄԱՅԻ

ԴՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1900թ.

Բ. ԳՐՔԻ

ՑԱԽԵԼՈՒՄ

Ա.

ԿԱՆՈՆՔ Ա. ԺՈՂՈՎՈՅ

ԳՈՐԾ. ԱՐԻՍՏԱԿԻՍ ԱՐՔԵՊԻՍ. ԴԱՒԹԵԱՆԻ

17—32 եր. (Հարունակելի)

Բ.

ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏԸ

ՎԼ. ԿԱՐԱԼԵՆԿՈՒ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՀԵԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ

49—112 եր. (Վերջը միւս անգամ)

X

Պատնէշը խորտակուած էր: Միւս օրը երեխան վեհերոտ հետաքրքրութեամբ ներս մտաւ ընդունարան, ուր նա ոտք չէր դրել այն օրուանից, երբ քաղաքացի օտարոտի հիւրը, որ սարսափելի ցասկոտ-ճշուն էր թուացել իրեն, բուն էր դրել այդտեղ: Իսկ այժմ ալդ հիւրի երէկուալ երգերը քաղցրացրել էին նրա ունկը և դէպի գործիքն ունեցած լարաբերութիւնը փոխել: Առաջուայ վեհերոտութեան վերջին մնացորդներով մօտեցաւ այն տեղին, ուր դաշնամուրն էր դրած, մի փոքր հեռու կանգ առաւ ու ականջ դրեց: Ընդունարանում ոչ ոք չկար: Մայրը գործը ձեռին միւս սենեակում նստած էր դահաւորակի վրայ և, շունչը բռնած, նայում էր ու զուարճանում նրա ամեն մի շարժումով, մանկան ջղալին դէմքի վրայ երևացող զգացումների ամեն մի փոփոխութեամբ:

Հեռուից ձեռները մեկնած՝ նա շօշափեց դաշնամուրի լղկած մակերևոյթը և խսկոյն երկչոտութեամբ ետ-ետ քաշուեցաւ: Մի երկու անգամ այս փորձն անելով, նա աւելի մօտ գնաց և սկսաւ ուշադրութեամբ զննել գործիքը, մինչև գետին խոնարհեցաւ, որպէս զի դաշնամուրի ոտները շօշափէ և ազատ կողմերից անցաւ դաշնամուրի պտոյտքը: Վերջապէս նրա ձեռները լղկած ստեղներին դիպան:

Լարի մեզմ հնչիւնը անվստահ կերպով թըթուաց օդի մէջ: Երեխան երկար ժամանակ ունկնդրած լսում էր հնչիւնի տատանումները, որոնք մօր լսելիքի համար անհետացած էին, և ապա խորին ուշադրութեամբ շարժեց միւս ստեղնը: Ալնուհետեւ նա իւր ձեռքը անց-կացրեց ամբողջ ստեղնաշարի վրայով և հասաւ բարձր

Հնչման ձայներին։ Նա ամեն մի ձայնը հանելուց յետոյ կանգ էր առնում, և ձայները երերում էին, դողդողում և օդի մէջ մարում։ Կոյրի գէմքը լարուածուշագրութեան հետ արտայալտում էր նաև գոհունակութիւն։ Ըստ երեսութիւն նա զու արճանում էր ամեն մի ձայնով, և արգէն տարրական ձայների վերաբերմամբ, որ ապագայ մեղեդիի բաղադրիչ մասերն էին կազմելու, ցոյց տուած զգաստ ուշիմութիւնը առհաւատշեալ էր, որ նա արուեստագէտ պիտի դառնար։

Բայց միւնոյն ժամանակ թւում էր, թէ կոյրը մի տեսակ առանձին լատկութիւն էլ էր տալիս ամեն մի հնչիւնին՝ երբ որ նրա մատների տակից դուրս էր թռչում բարձր աստիճանի ուրախ և պայծառ հնչիւնը, նա իւր գուարթացած գէմքը վեր էր բարձրացնում, ասես թէ գէպի վերև ճանապարհ գնելիս լինէր ալդ բարձրահնչիւն թռչող ձայնին։ Ընդհակառակն, բամբի թաւ, հազիւ լսելի ու խուլ դողդողոցի վրայ խոնարհեցնում էր ականջը. նրան թւում էր, թէ ալդ ծանր հնչիւնը պէտք է որ անպատճառ խոնարհ գլորուելիս լինի երկրի վրայով և ցիրուցան լինելով լատակի վրայ, գնայ հեռաւոր անկիւններում անհետանալ։

## XXI

Գեռի Մակսիմը լոկ համբերատար էր գէպի ալս բոլոր երաժշտական փորձերը։ Որքան էլ տարօրինակ թուի, բայց և այնպէս մանկան ալսքան որոշակի ցոյց տուած հակումները երկու տեսակ մտքեր էին ծնեցնում անկար զինուորականի մէջ։ Մի կողմից երաժշտական բուռն ձգտումն ապացուց էր նրա անկասկածելի ընդոծին երաժշտական ընդունակութիւններին և, ալս պէսով, մասամբ էլ որոշում էր նրա հնարաւոր ապա-

գան։ Միւս կողմից հիասթափման անորոշ զգացումը խառնում էր ալդ գիտակցութեանը։

—Ի հարկէ,—մտածում էր նա,—երաժշտութիւնը նոյնպէս մեծ որժ է, որի միջոցով հնարաւոր է ամբոխի սրտին տիրել։ Նա, կոլը, կարող է հաւաքել հարիւրաւոր հագնուած-զուգուած պճնասէր պարոններ ու տիկիններ, ու նրանց համար ածել զանազան տետակ... „վայլսեր“ ու „նօկտիւրներ“<sup>1)</sup> (ուղիղն ասած, քեռի Մակսիմի երաժշտական հմտութիւնը «վայլսերից» ու „նօկտիւրներից“ գէնը չէր գնում), իսկ նրանք մանրիկ թաշկինակներով կ'սրբեն իրենց աչքի արտասուքը։ Ե՞հ, գրողը տանի. ալդ չէր իմ ուզածս. բայց ինչ արած։ Երեխան կոյր է, թող ուրեմն կեանքի մէջ դառնալ այն, ինչ որ կարող է։ Բայց ասես թէ տւելի լաւ էր, որ երգն ընտրէր։ Երգը լոկ անորոշակի հեշտացած ականջին չէ սնունդ տալիս։ Նա պատկերներ է տալիս, մարդուս գլխում միտք ծնեցնում, իսկ սրտում արիութիւն։

—Ե՞լ, Իօխիմ,—ասաց նա մի երեկոյ կոյրի ետեւից Իօխիմի մօտ գնալով։ —Արի, դէն գցի քու ալդ սուլիչդ։ Դա վայել է փողոցի երեխաներին կամ դաշտի գառնարածներին, իսկ դու՛հօ ահագին մարդ ես, չնայելով որ ալդ տխմար Մարիան բոլորովին քեզ ոչխար է

<sup>1)</sup> „Վայլսը“ երոպական պար է, բայց իսկապէս՝ գերմանական է և <sup>2/3</sup> կամ <sup>1/3</sup> բաղմում ունի. յայտնի են Շարառուս-հօր, բայց առաւել Շարառուս-որդու վայլսերը։ Վերջինս վայլսերի թագաւոր մականունն էր ստացած։

«Նօկտիւրնը»—երաժշտական առանձին տեսակ պիէսներ են, որոնք մեղլ—անըջային բնաւորութիւն ունեն, բայց որոշ ձև չունին և սովորաբար գիշերային խաղաղութեան ժամանակ են ածւում։ Դրա ծագումը հին չէ. այլ Ֆիլդի և Շոպէնի ժամանակից։

դարձգելու Թիռն. մինչև անգամ քու տեղի եռ եմ ամա-  
չում, Աստուած վկար, Աղջիկը քեզնից երես է դարձ-  
րել, իսկ դու թթուել, մնացել ես: Հէնց մի գլուխ շը-  
վացնում ես ու շպացնում հէնց իմանաս ցանցն ըն-  
կած լոր լինիս: Պատմուի այս այսպիս մաս-  
ի օխիմը լոեց պայմանած պանի այս երկար կշտամ-  
բանքն ու մթնում ինքն երես ծիծաղեց նրա անառիթ  
ցանցան պրայ: Բայց երախաներ ու գառնարած բառե-  
րը թեթևակի վիրաւորանք պատճառեցին նրան: Ուկ-  
րանալում ոչ մի հոգուի մօտ ալսպիսի սրինդ չէք զըտ-  
նիլ ուր մնաց դառնարածների մօտ: Եղածները բո-  
լորն էլ սուլիչներ են միալն, մինչեռ ոա... ար, ինք-  
ներդ դատեցէք:

Նա իւր մատները բոլոր ծակերի վրայ դրեց ու  
սրնդի վրայ միւննոյն ձայնի առաջին: և երկրորդ ուժ-  
ներեակի հնչիւններն արձակեց: ու ինքը զուտըմանում  
էր ալդ լիսհնչիւն ձայներով: Մաքսիմը թքեց:  
— Թիռն: քո տունը չքանդուի: բոլորովին ցնդուել  
էր ալս գետքան: Ինչի՞ս է քու սրինդ: Դրանք ամեն-  
քըն էլ մէկ բան են — օրինգներն էլ, կանալքն էլ քու  
Մարիամիդ էլ հետը: հաշուած: Այսինչ եմ ասում: թէ  
մի երգ երգէիր: մի լաւ պապենական հին երգ:

Մակսիմ եացենկոն, որ մալառոս էր, շատ պարզ  
վարձունք ունէր: գիւղացիների ու ծառաների հետ: Նա  
յաճախ կանչվատում ու հայիցոյում էր, բայց ոչ չէր  
վիրաւորւմ նրանից, ուստի և ծառաները թէւ պատ-  
կառում էին նրանից, բայց միւսոյն ժամանակ բոլորո-  
վին ազատօրէն էին վարւում հետք: ինչ ասոյս մինչ-  
աւ մասին ասեմ: — պատասխանեց Խօսիմը պանի ա-  
ռաջարկութեանը: — Մի ժամանակ ես էլ ուրիշներից  
պական չէի երգում: Բայց իցէ թէ մեր գեղջկական եր-

գրն էլ ձեզ դիւթ չգայ, այսնէ, — թեթևակի խալթեց  
նա իւր խօսակցին: Առաջ ովքանի նոյն զամա միշտ նոյն  
— է՛հ, դուքս իս տալիս, էլիք, — ասաց Մակսիմը, —  
լաւ երգը սրնգի թալին է, միայն պէտք է երգել իմա-  
նալ, Ապա, Պետրոսիկ, թող իօխիմը երգէ, մենք լը-  
սենք, Բայց կը հասկանամ արդեօք, ...: Միշտ ոչ նոյն  
— Թեղջկական երգ պիտի ասէ, — հարցրեց երե-  
խան: — Դեղջկական լեզուն հասկանում եմ:

Մակսիմը հառաջեց:

— Է՛հ, տղաս: Գեղջկական երգեր չեն գրանք, ...:  
Ալլ հզօր, ազատ ազգի երգեր են: Քու մալրական պա-  
պերդ նրանց երգում էին Դնեպրի ու Փօնի տափաս-  
տաններում և Սև ծովի վրայ, ...: Է՛հ, մի ժամանակ դու  
էլ այդ կը հասկանաս, իսկ այժմ ես ուրիշ բանեց եմ  
վախում:

Արդարեւ, Մակսիմը վախենում էր, որ մի ուրիշ  
քան անհասկանալի կը մնայ երեխի համար: Նա կար-  
ծում էր, թէ վիպական երգի պայման պատկերները  
մարդուս սրտին ազդելու համար անպատճառ տեսողա-  
կան պատկերացումն է հարկաւոր: Նո վախենում էր,  
որ մանկական խաւար գլուխիր անկարող կլինի ըմբռո-  
նելու ժողովրդական բանաստեղծութեան պատկերաւոր  
լեզուն: Նա մոռացել էր, որ հին բայանները և Ուկ-  
րայինալի կոբզարներն ու փանդիռ ածողները <sup>1)</sup> մեծ  
մասամբ կոյրեր էին: Ճշմարիտ է, թէև շատ անդամ

1) Ժողովրդական երգիչներ ու նուագաժուներ եղել են  
քոլոր ազգերի մէջ կա հին ժամանակները մեզանուայայտնի  
են եղել Գողթան, երգիչները, իսկ այժմ աշուղները Հնում  
յայտնի էին Յոնաստանում ու ապսօնները, Ականդինաւիայրում  
ոկալգները, Սլաւեանների մէջ բայանները: Ներկայումն Ռուսի-  
այում աշուղները կոչում են կոբզար կամ բանդուրիստ (բանդու-  
րան քնարի նման մի գործիք է 8—24 լարով): Ծ. Թ.

աղքատութիւնը, հաշմանդամութիւնը մարդկանց ստիպում էին քնար կամ փանդիռ ձեռք առնել՝ նրանցով ողորմութիւն հաւաքելու համար: Բայց դրանք բոլորն էլ հօ խռալու ձայնով աղքատներ ու մուրացկաններ չեին միայն, և դրանք բոլորն էլ ծերութեան հասակում հօ չեին կուրացել: Կուրութիւնը տեսանելի աշխարհս ծածկում է խաւարչտին քօղով, որը, իհարկէ, իջնում է ուղեղի վրայ և դժուարացնում ու ճնշում նրա աշխատութիւնը, բայց և այնպէս ժառանգական պատկերացումներից և ուրիշ ճանապարհներով ստացուած տպաւորութիւններից ուղեղը մթութեան մէջ ստեղծում է իւր սեպհական աշխարհը, — թէև տխուր, վշտակոծ և շամանդադով պատած, բայց և ոչ զուրկ իւրատեսակ, անորոշ բանաստեղծութիւնից:

## XII

Մակսիմն ու երեխան նստեցին խոտի վրայ, իսկ Իօխիմը թեք ընկաւ իւր նստարանի վրայ (այս գիրքն աւելի էր համապատասխանում նրա արուեստգիտական տրամադրութեան) և, փոքր ինչ մտածելուց լետու ըսկը-սաւ երգել: Պատահաբար էր թէ զգաստ բնազդմամբ՝ խիստ աջող էր նրա ընտրութիւնը: Նա այս պատմական պատկերն էր ընտրել.

Օ՛հ, տամ на горі, тай женці жнутъ... <sup>1)</sup>)

Ով որ լսել է ժողովրդական ալս սքանչելի երգը պատշաճաւոր կերպով ասելիս, անշուշտ նրա լիշողութեան վրայ խորը տպաւորուած կլինի այդ երգի բարձր, երկար, ասես թէ պատմական լիշողութեան թախիծով

1) Ե՛յ, էս սարի վրէն, սարի վրէն  
Հնձուորները հունձ են անում.

Համակուած տարօրինակ եղանակը։ Նրա մէջ ոչ անցքերի նկարագիր կալ, ոչ արիւնահեղ կոտորածներ և ոչ էլ քաջազնական սխրագործութիւններ։ Դա ոչ էլ կազակի հրաժեշտն է իւր սիրուհուն, ոչ յանդուգն ասպատակութիւն է և ոչ էլ կապոյտ ծովի ու Դանուբի վրայ մակոյկներով կտարած արշաւանք։<sup>1)</sup> Դա մի վաղանցուկ պատկեր է միայն, որը որպէս վաղանցուկ անուրջ, որպէս պատմական անցեալի մասին տեսած ե-

<sup>1)</sup> Մալառուսիան մի ընդարձակ տափաստան լինելով միշտ ենթակայ էր թշնամիների յարձակման։ Թէպէտ ոռուսաց իշխանութիւնը Դնեպրի ափին հիմնուեց, բայց յետոյ հաստատուելով հիւսիս-արևելքում, Մոսկուայում, անզօր եղաւ այդ երկիրը իւր իշխանութեան տակ պահել։ Մալառուսիան նախ ընկաւ լիտվայի, ապա և Լեհաց թագաւորների ձեռքը, որոնք ամենայն հնար գործ էին դնում ժողովրդին կաթոլիկ դարձնելի, Կալուածատէրները սկսան խօսել լեհերէն, կրօնը փոխեցին, ժողովուրդն էլ ճորտ դարձրին։ 1596 թ. մտաւ միարարութիւնը, որով ամեն տեղ եկեղեցու մէջ պիտի ճանաչուէր պալի գերիշխանութիւնը։ Մի կողմից կրօնական ու տնտեսական սոսկալի ճնշումները, միւս կողմից թաթարների և ուրիշների ասպատակութիւնները խիզախ և ազատասէր մարդկանց ստիպեցին ապաստանել ապահով տեղեր և միացած ուժով կոռուել իրենց հալածողների դէմ։ այդտեղ մեծ դեր կատարեցին կաղակները. դրանք ազատ մարդիկ էին և միայն թագաւորի իշխանութիւնն էին ճանաչում։ Դրանք XV դարում մարտիկների մի ընկերութիւն կազմեցին Դնեպր գետի խութերում, Խորտից կղզում և մօտակայքում և սկսան ասպատակել Ղրիմու թաթարների երկրները, Սև ծովի ափերը։ Նրանք յաճախ ապատամբում էին Լեհաստանից և միացած Թիւրքիայի հետ կուռում էին սարսափելի կոտորածներ ու աւերածոյք գործելով. բայց մեծ մասամբ, վերջ ի վերջոյ, ընկճուում էին. շատ անգամ էլ միտցած լեհաց հետ պատերազմում էին Ռուսիայի դէմ։ Եւ թէպէտ 1654 թ. կազակները Մալառուսիայի հետ մըտան Ռուսիայի իշխանութեան տակ, բայց չդադարեցան անկախութիւն ձեռք բերելու համար նորից ապստամբեր, Ծ. թ.

բազի մի բեկոր, առ վայրկեան մի վերակենդանացել է մալառօսի լիշտութեան մէջ։ Ներկալիս մի հասարակ և սոսկական օր յանկարծ նրա երևակալութեան մէջ նկարուել է ալդ անորոշ, նսեմ և անհետացած պատկերը, որը տոգորուած է այն առանձին թախիծով, որով համակուած է արդէն կորած հալբենի անցեալը։ Անհետացած, բայց ոչ բոլորովին կորած անցեալը։ Ալդ անցեալն են լիշտեցնում դեռ ևս բարձր կանգնած շիրմների բլրակները (Խուրդան)<sup>1)</sup>, որոնց մէջ հանգչում են կազակների ոսկերոտիքը, ուր կէս գիշերին կրակներ են վառւում, որտեղից գիշերները ծանր թառանչ է լուսում։ Դրա մասին խօսում է և ժողովրդական աւանդութիւնն ու տակաւ առ տակաւ լռող ժողովրդական երգը.

Ой, тамъ на горѣ, тай женці жнуть  
А по-підъ горою, по-підъ зеленою  
Козаки идутъ,  
Козаки идутъ!...<sup>2)</sup>

Դաշտարագեղ լեռան վրալ հնձուորները հունձ են անում։ Իսկ լերան ստորոտում, ներքեսում, կազակ զօրքն է անցնում։

Մակսիմ Եացենկոն խորին ուշադրութեամբ լսում

1) Խուրդան թուրք-մողոլական բառ է և ամրութիւն է նշանակում։ Խուրդանների ուսումնասիրութիւնից երեւում է, որ դրանք դամբարաններ են. դրանց մէջ գտնուած են հարիւրաբոր մարդկանց կմաղքներ եւ մեծ մասամբ պատկանում են Ռուսիայի անդրապատմական շրջանին։ Ծ. Թ.

2) Ե՞շ, էս սարի վրէն, սարի վրէն

Հնձուորները հունձ են անում։

Կանաչ սարի, սարի վեշէն

Կազակներ անցնում

Կազակներ անցնում...:

Եր այս տիսուր եղանակը։ Նրա երեակալութեան մէջ ծնուեց այս, ասես արևմտոցի մելամաղձալին ճաճանչ-ներով լուսաւորուած պատկերը, որ առաջացել էր զար-մանալի կերպով երգի բովանդակութեան հետ միա-խառնուող հրաշալի եղանակից։ Լերան վրայ, խաղաղ դաշտերում երևում են հնձուորների պատկերները՝ ան-ձայն խոնարհած արտերի վրայ։ Իսկ ներքեւը, հովտի երեկոյեան ստուերների հետ միախառնուած անշառուկ անցնում են գնդերը։

По переду Дорошенко

Веде свое війско, війско запорожське,

Хорошенько.<sup>1)</sup>

Եւ պատմական երգի երկարող հնչիւնը ծփում է, զօղանջում և օդի մէջ լոռում, որպէս զի ալնուհետե-կրկին զօղանջէ և աղջամուղջի միջից նորանոր պատ-կերներ դուրս քաշէ……

### XIII.

Մանուկը մոալլ ու տիսուր գէմքով լսում էր եր-գը։ Երբ երգիչը երգում էր լերան մասին, որի վրայ հնձուորները հունձ են անում, երևակալութիւնը Պետ. ըրյուին անմիջապէս գէպի ծանօթ քարափի բարձունքը տարաւ։ Նա ալդ քարափը ճանաչեց նրանից, որ ներ-քեւում հոսում է գետը՝ քարերին բաղխող հազիւ լսե-լի ալիքները վշշացնելով։ Նա գիտէ նոյնպէս, թէ ինչ բան է հնձուորը, նա լսում է մանգաղների զնգզնգո-ցը ու տապալուող հասկերի խշշոցը։

<sup>1)</sup> Զօրքի առաջ, գլուխ անցած

Դորոշենկոն դաշաղ զօրքը, դոչտող զօրքը

Առաջ տանում։

Իսկ երբ երգի մէջ ական նկարագրել, թէ ինչ  
էր կատարւում լերան ստորոտում, կոյր ունկնդրին ե-  
րևակայութիւնն անմիջապէս լերան գագաթից հովիտ  
իջեցրեց...:

Մանգաղների զնզգնդոցը գագարեց, բայց երեխան  
գիտէ, որ հնձուորներն այստեղ են, լերան վրայ.  
Նրանք մնացին, բայց հնձելու ձայնը չէ լսում, որով-  
հետև նրանք բարձր են, նոյնքան բարձր, որքան և  
մալրիները, որոնց աղմուկը լսում էր նա քարափի տակ  
կանգնած։ Իսկ ներքեւը, գետափին լսում է ձիանոնց  
անընդհատ, միակերպ տրոփը...։ Նրանք շատ են, այն-  
տեղ, լերան ստորոտում մթութեան մէջ տարածուած  
է խուլ աղմուկը։ Այդ կազակներն են գալիս։

Կոյր մանուկը գիտէ նոյնպէս, թէ ինչ է նշանա-  
կում կազակ։ Ծերունի Խվեդկոյին ամենքն էլ „ծեր  
կազակ“ են անուանում. նա ժամանակ առ ժամանակ  
ապարանքն է գալիս։ Խվեդկոն շատ անգամ էր Պետ-  
րոսին իւր ծնկներին նստացրել ու դողդոջուն ձեռնե-  
րով նրա մազերը շոլել։ Երբ երեխան իւր սովորութեան  
համեմատ ձեռները նրա դէմքին էր քսում, այն ժա-  
մանակ իւր գիւրազգաց մատներով շօշափում էր ծեր  
կազակի խորխոր կնճիռները, քաշ ընկած մեծ-մեծ բե-  
խերը, ներս ընկած այտերը և այտերի վրայ ծերունու  
արտասուքը։ Երգի հնչիւնների ազդեցութեամբ մանուկն  
այսպիսի կազակներ էր երևակայում ալնտեղ, ներքեւը,  
լերան ստորոտում։ Նրանք էլ Խվեդկոյի նման՝ երկար  
բեխերով, նոյնպէս կզացած, նոյնպէս ծերունի, նստած  
են ձիանը։ Նրանք անկերպարան ստուերների նման  
շարժում են խաւարի մէջ և նոյնպէս, Խվեդկոյի նը-  
ման, մի բանի համար լաց են լինում. Նրանք գուցէ  
լաց են լինում նրա համար, որ թէ լերան վրայ և  
թէ հովտում սփռուած են Խօխիմի երգի տխուր, եր-

կայն հառաջները — հառաջներ այն „անտես-անճանանչ կազակի“ համար, որ իւր նորատի կինը փոխել է պատերազմական տառապանքների հետ:

Մակսիմը բաւական է մի հայեացք միայն ձգէր, որ հասկանար, թէ երեխի դիւրազգած բնոյթքը, չնայելով կուրութեան, ընդունակ էր երգի բանաստեղծական պատկերներն ըմբռնելու:

Այսպէս էր օրինակ Դորոշենկոյի ապստամբութիւնը, որը յիշուած է սոյն գրքոյի մէջ. Նա ուզում էր միանալ Թիւրքիայի հետ, բայց ուսուաց և լեհաց միացեալ զօրքերը յետ մղեցին սուլթանի զօրքերին. Միևնոյն կերպով ԽVIII դարում ուզում էր Մազեպան շունդացոց օգնութեամբ ապստամբել, բայց նոյնպէս անաջող անցաւ. 1775 թ. Եկատերինա կայսրուհին վերջացրեց սեչը, կազակները ցիր ու ցան եղան և ապա կազմեցին ներկայ կազակ զօրքի մի մասը:

Ընդհանրապէս կազակները ազատասէր մարդիկ էին, որ փախչելով իրենց իշխանների ու կալուածատէրների ձեռքից, բնակութիւն էին հաստատում Ռուսաց իթազաւրութեան սահմանների վրայ: Նրանք կամաց-կամաց կազմակերպութելով խըմքեր էին կաղմում և երկրի սահմանները պահպանում, շատ անդամ նաև երկրների տիրում, ինչպէս օրինակ Երմակը իւրխմբով Սիբիրին տիրելով ընծայաբերեց Ռուսիային: Ծ. թ.

---

Գ. ԳԼՈՒԽ.

---

I

Մակսիմի նախագծած կարգ ու կանոնի շնորհիւ կոլըն ամեն բանի մէջ, ուր որ Հնարաւոր էր, ինքն իւր գլխին էին թողել, և ալդ շատ լաւ արդիւնք ունեցաւ: Տանը նա ամեննին անօգնական չէր թւում,

ամեն կողմ ամենալն վստահութեամբ ման էր գալիս,  
ինքը իւր սենեակը կարգի էր ձգում, խաղալիկներն ու  
երերը որոշ կարգով դասաւորում։ Բացի այդ, նրան  
մատչելի եղածին չափ, Մակսիմն ուշադրութիւն էր  
դարձնում նաև նրա մարմնական մարզանքների վրա՝  
—նա մարմնամարզութեամբ էր պարապում, իսկ վեց  
տարեկան միջոցին Մակսիմը նրան մի հանդարտ և փոք-  
րիկ ձի ընծալեց։ Սկզբում մալրը երևակալել անզամ  
չէր կարող, թէ իւր կոյր որդին ձի հեծնել կը կարո-  
ղանալ, և իւր եղբօր հնձարքը կատարեալ խելացնո-  
րութիւն էր համարում։ Բայց անկար զինուորականը  
գործ գրեց իւր բոլոր ազգեցութիւնը, և երկու երեք  
ամսից կոյրը թամքի վրայ պինդ նստած խնդագին ար-  
շաւում էր Խօսիմի կողքից, որը միայն պտոյտ անելու  
տեղերումն էր կարգադրութիւն անում։

Այսպէսով կուրութիւնը նրա մարմնական կանոնա-  
ւոր զարգացման արգելք չեղաւ և մանուկի բարոյական  
կազմի վրայ գրած գործած ազգեցութիւնը որքան հը-  
նարաւոր էր, թուլացաւ։ Նրա հաստիքիւր տարիքին հա-  
մեմատ բարձր էր և վայելչակազմ, դէմքը փոքր ինչ  
դժգոյն էր, գծերը նուրբ և արտալալտիչ։ Սև մազերն  
աւելի ևս շուշ էին տալիս դէմքի սպիտակութեան,  
իսկ խոշոր, մութ, հազիւ շարժուող աչքերը նրան իւ-  
րատեսակ, մի անգամից ուշադրութիւն գրաւող արտա-  
լայտութիւն էին տալիս։ Ունքերի վրալի թեթև ծալքը,  
գլուխը փոքր ինչ առաջ ձգելու սովորութիւնը, դէմքի  
վրալից ժամանակ առ ժամանակ մի տեսակ ամպի նը-  
ման անցնող թախիծի արտայալտութիւնը՝—ահա սրանք  
էին միայն, որով կուրութիւնը արտայալտում էր նրա  
արտաքին կերպարանքի վրայ։ Ծանօթ տեղերում նրա  
շարժումներն ինքնավստահ էին, բայց էլի նկատելի  
էր, որ ընդունակ աշխողժը ճնշուած է և միայն ժամա-

նակ առ ժամանակ է արտալալուում ջղալին բաւական բուռն ուժգնութիւններով:

II

Ալժմ լսողութեան տպաւորութիւնները բոլորովին տիրապետող նշանակութիւն էին ստացել կոյրի կեանքի մէջ, ձայնական ձևերը նրա մտքի գլխաւոր ձևերն, մտաւոր աշխատութեան կենդրոնն էին դարձել: Նա երգերն ուսանում էր՝ խորամուխ լինելով նրանց դիւթիչ եղանակներին, և բովանդակութեանը ծանօթանում՝ նրան մեղեդու թախիծով, զուարթութեամբ կամ մտախոհութեամբ գեղանկարելով: Նա առաւել ևս ուշադրութեամբ ըմբռնում էր շրջապատող բնութեան ձայնները և, աղօտ զգացողութիւնները միախառնելով մալրենի երգերի սովորական եղանակներին, երբեմն երգեմն կարողանում էր դրանց համախմբելով լանպատրաստից ստեղծել մի եղանակ, որի մէջ դժուար էր որոշել, ո՞րտեղ է վերջանում ժողովրդական, ականջի սովոր եղանակը և ո՞րտեղ է սկսում սեպհական ստեղծագործութիւնը: Նա ինքն էլ չէր կարող իւր երգերի մէջ ջոկել ալդ երկու տարրերը—այնքան անբաժանելի կերպով միաձուած էին նրանք: Նա շատ շուտով սովորում էր այն ամենը, ինչ որ աւանդում էր մալրը, որ դաշնամուր ածել էր սովորեցնում, բայց նա սիրում էր նաև Իօմիմի սրինգը: Դաշնամուրն աւելի ճոխ, աւելի հնչական ու աւելի լիահնչիւն էր, բայց դա սենեակումն էր դրած, մինչդեռ սրինգը կարելի էր հետը դաշտ տանել, և նրա գեղգեղանքն այնպէս անբաժան միախառնում էր տափաստանի մեղմ հառաջանքին, որ երբեմն Պետրոսն ինքն էլ չէր կարողանում որոշել, թէ հովն էր հե-

ոռւից աղօտ խոհեր սփռում, թէ ինքն էր ալդ հառաջ-ները դուրս բերում սրնգի միջից:

Երաժշտութեան ալս հրապոյրը նրա մտաւոր աճելութեան կեդրոն դարձաւ. դա լցնում և բազմատեսակ էր դարձնում նրա գոյութիւնը: Մակսիմը դրանից օգուտ էր քաղում նրան իւր հալրենիքի պատմութեանը ծանօթացնելու համար, և ալդ ամբողջ պատմութիւնը, որ ձայներից էր հիւսուած, անցաւ կոյրի երեւակալութեան միջով: Երգով հետաքրքրուած լինելով, նա սկսաւ ծանօթանալ նաև նրա մէջ երգուած հերոսների վիճակով, նրանց ճակատագրով, իւր հալրենիքի ճակատագրով: Այստեղից նրա մէջ հետաքրքրութիւն զարթեցաւ դէպի գրականութիւնը, և ինը տարեկան հասակում Մակսիմը սկսաւ իւր առաջին դասերն աւանդել նրան: Մակսիմի հմտաբար աւանդած դասերը, (որոնց համար նա ստիպուած եղաւ կոլրերին կրթելու համար գործածուող յատուկ ձևերն ուսումնասիրելու), շատ դիւր եկան տղին: Դրանք նոր տարրեր էին մըտցնում նրա հոգեկան տրամադրութեան մէջ, այսինքն որոշակութիւն ու պարզութիւն, որոնք հաւասարակըշում էին երաժշտութեան նսեմ տպաւորութիւնները:

Այսպէսով երեխան ամբողջ օրը զբաղուած էր. կարելի չէր գանգատուել, թէ նա նուազ տպաւորութիւն է ստանում: Թւում էր. թէ լիտլիր կեանքով էր ապրում նա՝ ինչքան որ դա մատչելի էր նրան: Թւում էր դարձեալ, թէ նա իւր կուրութիւնն անգամ չէ զգում:

Մինչդեռ մի օտարօտի, ոչմանկական թախիծը բայց և այնպէս երևում էր նրա բնաւորութեան մէջ: Մակսիմն ալդ վերագրում էր մանուկների ընկերութեան պակասութեանը և աշխատում էր ալդ պակասը լրացնել:

Ապարանք բերուած գիւղացի մանուկները քաշւում էին և չէին կարողանում ազատ բացուել։ Բացի տան անսովոր կարգ ու սարքից, նրանց քիչ չէր շփոթեցնում նաև „պանիչի“ կուրութիւնը։ Նրանք վեհերկուութեամբ նայում էին նրան և, մի կողմ հաւաքուած, լուռ էին մնում կամ անհամարձակ կերպով շշնչում երար մէջ։ Բայց երբ նրանց ազատ բաց էին թօղնում պարտիզում կամ դաշտում, աւելի ազատ էին դառնում և իրենց համար խաղեր յօշինում, բայց այդպիսի միջոցին էլ կոլը անմասն էր մնում խաղին և տխուր լսում ընկերների ուրախ վազվըզոցը։

Երբեմն էլ Իօխիմը մանուկներին հաւաքում էր զլիխն ու սկսում զուարճալի հեքեաթներ և պատմութիւններ անել։ Գիւղացի մանուկները, որոնց ծանօթ էին խախօլների խենդուլիկ դեերն ու խաբեբայ-վհուկները, այդ պատմութիւնները լրացնում էին իրենց սեպ. հական պաշարից և ժամանակը շատ զուարճալի էր անցնում։ Կոլը յեծ ուշադրութեամբ լսում էր նրանց և հետաքրքրում էլ էր, բայց ինքը սակաւ էր ծիծադում։ Հստ երեսութին կենդանի խօսքի սրութիւնները մեծ մասամբ անմատչելի էին մնում նրա համար, և իրօք—նա ոչ պատմողի աչքերի խորամանկ փոքրիկ կրակները կարող էր տեսնել, ոչ ծիծդուն կնճիռները, ոչ երկար ընչացքների քաշքոցը։

### III

Մեր նկարագրած ժամանակից փոքր ինչ առաջ փոխուել էր մօտի կից կալուածքի «պոսսեսորը»<sup>1)</sup>։ Նախկին անհանգիստ հարեանի տեղ, որը նոյն խա-

<sup>1)</sup> Հարաւ-արևմտեան Ռուսիայում բաւական տարածուած է կապալով կալուածք վեր առնելը։ Կապալառուն (տեղական

զաղաբարոյ պան Պոպելոկու հետ էլ դատի մէջ էր  
մտած մի ինչ որ արտ արածացնելու խնդրի պատ-  
ճառով, այժմ մերձաւոր ագարակում իւր կնոջ հետ  
ապրում էր ծերունի Եակուլսկին: Զնալելով որ երկու  
ամուսինների տարիքը միասին հաշուած հարիւրից պա-  
կաս չէր լինիլ, բայց նրանք համեմատաբար դեռ մօ-  
տերքս էին ամուսնացել, որովհետեւ պան Եակուրը  
երկար ժամանակ չէր կարողանում կապալի համար  
հարկաւոր դումարը հաւաքել, ուստի և այդ պատճա-  
ռով էլ ուրիշների գոներում “տնտեսի” պաշտօն էր  
կատարում: Իսկ պանի Ագնեշկան, երջանիկ վայրկեանի  
ակնկալութեամբ, որպէս պատուաւոր սենեկապանուհի  
ապրում էր N N գրաֆուհու մօտ: Երբ որ վերջապէս  
հասաւ այդ երջանիկ ըսպէն և հարսն ու փեսան ձեռք  
ձեռքի տուած եկեղեցի մտան, արդէն վայելչատես փե-  
սի ընչացքի ու քեաքուլի կէսը բոլորովին սպիտակել  
էր, իսկ հարսի ամօթխածութեամբ կարմրատակած  
դէմքը նոյնպէս արծաթափալլ խոպոպներով էր զար-  
դարուած:

Սակայն այդ հանգամանքն արգելք չեղաւ ամուս-  
նական երջանկութեան և լամած սիրոյ պտուղն եղաւ  
միակ դուստրը, որ համարեա թէ կոլրին տարեկից էր:  
Ծերութեան օրերում հաստատելով իրենց բոյնը, որի  
մէջ նրանք, թէև պալմանական կերպով, կարող էին  
իրենց լիակատար տէր համարել, ծերունիներն ապրում  
էին խաղաղ ու համեստ, ասես թէ այդ հանգստու-  
թեամբն ու առանձնական կեանք վարելով ուզում էին  
իրենց վարձատրել ալն ծանր կեանքի համար, որ անց

---

բառով («լոսսեսոր») կառավարչի նման մի բան է դառնում:  
Նա կալուածքի տիրոջը մի որոշ գումար է վճարում, և այնու-  
հետև իւր ձեռներէցութիւնից է կախուած շատ կամ նուաղ  
եկամուտ ստանալը:

էին կացրել օտարների մօտ։ Նրանց վերցրած առաջին կապալի գործը մի այնքան էլ աջող չէր գնացել, ուստի և այժմ նրանք փոքր ինչ սահմանափակել էին իրենց ձեռնարկութիւնը։ Սակայն այս նոր բնակարանում էլ ինչպէս իրենց սիրտն էր ուղղում, այնպէս տեղաւորուեցան։ Անկեանը, ուր բաղեցներով զարդարուն սրբերի պատկերներն էին դրուած, պառաւն „արմաւենու“ և „մոմերի“<sup>1)</sup> հետ պահում էր փոքրիկ տոպարակներով արօտներ ու արմտիք, որոնցով նա բժշկում էր իւր ամուսնուն և իրեն դիմող գիւղացի կանանց ու տղամարդկանց։ Այդ արօտների հոտով լցուել էր ամբողջ խրճիթը և ամեն մի այցելուի լիշողութեան մէջ անլուծանելի կերպով միաւորւում էր գա այն լիշատակի հետ, որ այցելուն ստանում էր այդ փոքրիկ մաքուր տնակի, դրա խաղաղութեան և կարգ ու սարքի, և այն երկու ծերուկների մասին, որոնք մեր ժամանակուալ համար անսովոր հանգիստ կեանք էին վարում ալդտեղ։

Այս ծերունիների ընկերակցութեամբ էր մեծանում նրանց միամօր աղջիկը, մի փոքրիկ աղջիկ՝ երկայն դեղձան ծամով և կապուտ աչքերով, որոնք ամենքին էլ հէնց առաջին ծանօթութիւնից զարմացնում էին իրենց մի տեսակ արտասովոր լըջութեամբ, որը զեղուած էր նրա

<sup>1)</sup> «Արմաւենու» ճիւղը համապատասխան է ռուսական ուռիւխ ճիւղին, իսկ «մոմերը», որ գըրումնիցա, են կոչում, թափում են մեղրամոմից և վառում են խիստ փոթորիկների միջոցին, նոյնպէս հոգեվարքների ձեռքն են տալիս։ Ծ. Հ.

Իսկ հայոց մէջ սովորութիւն կայ (Խրիմ և Նոր-Նախիջևան) Ծաղկազարդին եկեղեցուց բերած ուռիքը պահել և սաստիկ քամու ժամանակ այրել, որ քամին դադարի. իսկ մոմ չեն պահում. և եթէ պահում են — Երուսաղեմից բերածը, որ վառում են բերողի մահուան միջոցին։ Ծ. Թ.

ամբողջ կերպարանքի վրայ։ Թւում էր, թէ ծնողների տարաժամ սիրոլ խաղաղութիւնը գտներ բնաւորութեան վրայ արտափալել էր ալդ ոչ-մանկական խոհականութեամբ, շարժումների կանոնաւոր ու սահուն հանդարտութեամբ, կապոյտ աչքերի մտախոհութեամբ ու խորութեամբ։ Նա երբէք օտարներից խոյս չէր տալիս, ե. ըեխաների հետ ծանօթանալուց չէր քաշւում և մասնակցում էր նրանց խաղերին։ Բայց մի այնպիսի անկեղծ ներողամտութեամբ էր անում այս ամենը, որ ասես թէ ալդ բաներն իրեն համար բոլորովին կարևոր չլինէին։ Իրօք, նա լիովին գոհ էր իւր սեպհական ընկերակցութիւնից՝ զբասնելիս, ծաղիկներ հաւաքելիս, իւր խրծիկի հետ զրոյց անելիս։ և այս ամենը նա մի այնպիսի լրջութեամբ էր անում, որ երբեմն թւում էր թէ ձեր առջևինը ոչ թէ երեխալ է, հապա մի փոքրիկ հաստկաւոր կին։

#### IV

Մի անգամ Պետրոսը գետի մօտ բլրակի վրայ մենակ էր։ Արևը մալր էր մտնում, օդի մէջ հանգստութիւն էր տիրում, միայն երեկոյեան առուն վերադարձող նախրի ձայնն էր գալիս, որը հեռաւորութեան պատճառով մեղմանում էր։ Երեխան նոր էր դադարել ածելուց և ամարալին երեկոյի կիսանիրհ խոնջութեան անձնատուր եղած, ձգուել էր արօտի վրայ։ Նա մի առ վայրկեան ինքնամոռացութեան մէջ էր ընկել, երբ մէկի թեթև ոտնաձայնը նրա նիրհը խանգարեց։ Նա տհաճութեամբ բարձրացաւ արմուկների վրայ և ականջ դըրբեց։ Քայլերը կանգ առան բլրակի ստորոտում։ Քայլուածքը նրան անծանօթ էր։

— Ա՛յ տղալ, — յանկարծ լսեց նա մի մանկական

ձայն: — Զգիտես ով էր հէնց նոր ալստեղ սըինդ ածողը:  
Կոյրը չէր սիրում, որ իւր առանձնութիւնը խան-  
գարեն: Ուստի և փոքր ինչ կոպտութեամբ պատասխա-  
նեց ալդ հարցին:

— Ես էի...

Թեթև, զարմացական բացականչութիւն եղաւ ալդ  
խօսքին պատասխան, և անմիջապէս էլ աղջկալ ձայնը  
պարզամիտ քաջալերական եղանակով աւելացրեց.

— Ինչքան լաւ էր:

Կոյրը լուռ մնաց:

— Ինչի՞ չէք հեռանում, — հարցրեց նա ապա լսե-  
լով, որ իւր անկոչ խօսակիցը դեռ կանգնած է:

— Ինչի՞ ես վռնտում ինձ, — հարցրեց աղջիկը իւր  
մաքուր միամիտ-զարմացած ձայնով:

Մանկական այս խաղաղ ձայնի հնչիւններն ա-  
խորժ տպաւորութիւն գործեցին կոյրի լսելիքի վրայ.  
բայց և այնպէս նա իւր առաջուալ եղանակով պատաս-  
խանեց.

— Զեմ սիրում, որ մօսս մարդ է գալիս...

Աղջիկը ծիծաղեցաւ:

— Ա՛ւ քեզ բան... մի սրան մտիկ: Միթէ սաղ  
աշխարհը քունն է և դու կարող ես մարդկանց արգի-  
լել, որ երկը վրայ ման չգտան:

— Մայրիկս ամենքին էլ հրամակել է, որ ինձ չմօ-  
տենան:

— Մայրիկ, — մտախոհութեամբ կրկնեց աղջիկը:  
— Իսկ իմ մայրիկս ինձ թոյլ է տուել գետի մօտերքը  
զբօսնելու...:

Երեխան, ընդհանուրի զիջողամտութիւնից փոքր  
ինչ երես առած, այսպիսի հաստատ ընդիմարտանութեան  
սովոր չէր: Բարկութեան գրգիռը զդալին կոհակով ան-

ցտւ նրա դէմքի վրալով. նա բարձրացաւ տեղից և ա-  
րագ-արագ և գրգռուած ասաց.

—Հեռացէք, հեռացէք, հեռացէք...

Զգիտեմ, թէ ինչպէս կվերջանար այս բանը, թէ  
որ ալդ միջոցին ապարանքից ըսուէր Խօխիմի ձայնը,  
որ կոյրին թէլի էր կանչում։ Պետրոսը արագ-արագ  
բլրակից դէպի վայր վազեց։

—Օհ, ինչ փիս տղալ է,—ալո ցասկոտ բացական-  
չութիւնը լսեց նա իւր ետեկց։

## V.

Յաջորդ օրը մանուկը, միւնոյն տեղում նստած,  
մտաբերեց երեկուալ ընդհարումը։ Ալդ լիշողութեան  
մէջ զայրոյթ չկար այլ ևս։ Ընդհակառակն, մինչև ան-  
գամ նա ցանկանում էր, որ կրկին գար այն աղջիկը,  
որի ձայնի նման հաճելի, խաղաղ ձայն դեռ երբէք  
չէր լսել նա։ Իւր ծանօթ երեխաները բարձրաձայն  
գոռում էին, ծիծաղում, կռւում, լաց լինում, բայց  
նրանցից ոչ ոք ալսքան հաճելի ձայնով չէր խօսում։  
Նա սկսաւ վշտանալ, որ վիրաւորել էր անծանօթ աղ-  
ջրկան, և նա, հաւանականօրէն, այլ ևս երբէք չի  
վերադառնալ։

Յիրաւի, աղջիկը երեք օր բոլորովին չեկաւ։ Իսկ  
չորրորդ օրը Պետրոյսը ներքեռում, գետի ափին լսեց  
նրա ոտնաձայնը։ Նա համրաքայլ առաջ էր գնում.  
գետափի կոպիճները թեթեակի շշուկ էին հանում նրա  
ոտների տակ. աղջիկը կամացուկ լեհական մի երգ էր  
երգում։

—Բան եմ ասում,—ձայն տուեց Պետրոյսը, երբ  
աղջիկը եկաւ, նրան հաւասարուեց։ —Է՞լի դուք էք։  
Աղջիկը պատասխան չտուեց։ Խճաքարերը դարձեալ

խշաշում էին նրա ոտների տակ: Նա երգում էր և  
նրա կեղծ անհոգ ձայնի մէջ դեռ կոլըն զգում էր այն  
վիրաւորանքը, որ ինքը հասցըել էր նրան:

Բայց մի քանի քայլ անելով անծանօթ աղջիկը  
կանգ առաւ: Երկու-երեք րոպէ լուսթեամբ անցաւ:  
Այդ միջոցին նա իւր ձեռքում հաւաքած վալրի ծա-  
ղիկներից փունջ էր կազմում, իսկ կոյրը պատասխանի  
էր սպասում: Նա աղջկայ այս կանգ առնելն ու դրան  
յաջորդող լուսթիւնը գիտաւորեալ արհամարհանքի վե-  
րագրեց:

—Միթէ չէք տեսնում, որ ես եմ,—մեծ արժա-  
նիքով պատասխանեց աղջիկն իւր ձեռին բռնած վալրի  
ծաղիկների փունջը կազմել-վերջացնելով:

Այս պարզ հարցը ցաւ պատճառեց կոյրի սրտին:  
Ոչինչ չպատասխանեց նա, միայն նրա ձեռները, որ յե-  
նած էին գետնին, ջղաձգաբար բռնեցին գետնի արօտը:  
Բայց խօսակցութիւնը սկսուած էր արդէն, և աղջիկը,  
դեռ էլի նոյն տեղում կանգնած ու իւր փնջով զբա-  
դուած՝ հարցըեց նորից.

—Քեզ ով սովորեցը ալդպէս լաւ սրինգ ածել:

—Խօխիմը սովորեցը, —պատասխանեց երեխան:

—Շատ լաւ: Բայց ինչո՞ւ ալդպէս բարկացկոտ ես:

—Ես... ձեզ վրայ չեմ բարկանում, —ցած ձայնով  
ասաց նա:

—Դէ, ուրեմն ես էլ չեմ բարկանում..., Եկ միա-  
սին խաղ անենք:

—Ես չեմ կարող ձեզ հետ խաղ անել, —շփոթուած  
պատասխանեց կոյրը:

—Չես կարող... ինչո՞ւ:

—Այնպէս:

—Բայց ինչո՞ւ ախր:

— Հէնց ալնպէս, — հազիւ լսելի ձայնով պատասխանեց նա և աւելի շփոթուեց:

Երբէք ոչ մինի հետ նա դեռ ևս առիթ չէր ունեցել իւր կուրութեան մասին խօսելու, և աղջկալ միամիտ խօսակցութեան ձեւը, որ հաստատաբար առաջարկում էր իւր հարցերն ու պնդում, բութ ցաւ էին պատճառում նրան:

Անծանօթ աղջիկը բլուրն ի վեր բարձրացաւ:

— Ի՞նչ ծիծաղելի տղալ ես, — ներողամիտ վշտակցութեամբ խօսեց աղջիկը՝ նրա կողքին արօտի վրալ պազելով: — Երևի այդ նրանից է, որ դու դեռ ինձ չես ճանաչում: Ա՛յ, կը ճանաչես և էլ չես վախիլ ինձանից: Իսկ ես ոչ ոքից չեմ վախում:

Նա այս ասում էր անհոգ պարզութեամբ, և կորը լսեց, թէ ինչպէս աղջիկը մի կոյտ ծաղիկ լցրեց իւր գոգնոցի մէջ:

— Որտեղից էք հաւաքել այդ ծաղիկները, — հարցրեց նա:

— Այնտեղից, — գլխով արեց նա իւր ետեր ցոյց տալով:

— Մարգագետնից:

— Ո՛չ, այն տեղից:

— Ուրեմն անտառից: Իսկ ինչ ծաղիկներ են:

— Միթէ գու ծաղիկ չես ճանաչում...: Վահ, ինչ տարօրինակ տղալ ես դու... ծշմարիտ շատ տարօրինակ տղալ ես...:

Երեխան մի ծաղիկ առաւ ձեռքը. նա մատներով արագութեամբ ու թեթեռութեամբ շօշափեց ծաղիկ տերեւներն ու պսակը:

— Սա եղածաղիկ է, — ասաց նա, — բայց ալ սա մանուշակ է:

Յետոյ նա միւնոյն եղանակով ուղեց ծանօթանալ

իւր խօսակցի հետ՝ ձախ ձեռքով բռնեց աղջկալ ուսից, իսկ աջով սկսեց շօշափել նրա մազերը, ապա արտեսանունքը, և մատներն արագապէս անց կացրեց դէմքի վրայով, աեղ-տեղ կանգ առնելով և ուշադրութեամբ ուսումնասիրելով իրեն անծանօթ դիմագծերը:

Այնքան անակնկալ և արագ կատարեց այս ամենը, որ աղջիկը զարմանքից ապուշ կտրած, ոչ մի խօսք չկարողացաւ ասել: Նա միայն աչքերը լայն-լայն բացած, որոնց մէջ արտայալտում էր սարսափի նման մի զգացմունք, նայում էր նրան: Նա միայն ալժմ նկատեց, որ մի տեսակ օտարոտի բան կար իւր նոր ծանօթի դէմքի վրայ: Մանկան դժգուն և նուրբ դիմագծերը, որ լարուած ուշադրութիւն էին արտայալտում, մնացել էին սառած և ասես թէ բոլորովին չէին սազդալիս նրա անշարժ հայեացքին: Նրա աչքերն ուղղուած էին մի կողմ և ոչ մի կապ չունէին իւր վարմունքի հետ, և դէպի մուտքը խոնարհող արեգակի լոյսը տարօրինակ կերպով ցոլանում էր նրա աչքերի մէջ: Այս ամենը մի առ վալրկեան ծանր մղձաւանց թուաց աղջկան:

Իւր ուսն ազատելով տղի ձեռներից, նա յանկարծ վեր թռաւ տեղից և լաց եղաւ:

— Ինչի ես ինձ վախեցնում, անպիտան տղալ, — բարկացած ասաց նա արտասուքի միջից: — Ես ինչ եմ արել քեզ... ինչք համար...

Պետրոյսը ապշած, գլուխը ցած քաշած նստել էր նոյն տեղում, և մի տարօրինակ զգացմունք՝ զալրոյթի և ստորացման զգացմունքներն իրար խառնուած, կիզիչ ցաւով լքցրել էր նրա սիրտը: Դեռ առաջին անգամն էր, որ նա զգում էր խեղանդամի ստորացումը. նա առաջին անգամն էր հասկացաւ, թէ իւր մարմնական արատը ոչ միայն վշտակցութիւն, այլ և վախ կա-

ըող է ազդել։ Ի հարկէ, նա կարող չէր իրեն ճնշող ալդ ծանր զգացմունքի մասին պարզ հաշիւ տալ ինքն իրեն, բայց հէնց ալդ գիտակցութեան անորոշ ու ազօտ լինելու պատճառով էլ նրա կրած տանջանքը չէր նուազում։ Սուր ցափ ու վիրաւորանքի զգացմունքը եկել կաշկանգել էր նրա կոկորդը, և նա վեր ընկաւ արօտի վրայ ու լաց եղաւ։ Նրա լացը քանի գնում սաստկանում էր, զղաձգալին հեկեկանքներն ամբողջապէս ցնցում էին նրա փոքրիկ մարմինը, մանաւանդ որ մի ընդոծին հպարտութիւն ստիպում էր նրան ճնշել ալդ զգացմունքի արտայատութիւնը։ Աղջիկը, որ արդէն բլրակից ներքեւ էր վազել, լսեց ալդ խուլ հեկեկանքներն ու զարմացած ետեւը նալեցաւ։ Տեսնելով, որ իւր նոր ծանօթը երեսի վրայ գետնին փոռուած դառնապէս լաց է լինում, կարեկցութիւն զգաց, կամացուկ նորից բլուրը բարձրացաւ ու կանգնեց նրա մօտ։

— Ա՛յ տղալ, — ասաց նա ցած ձախնով, — ինչք ես լաց լինում։ Զինի կարծում ես թէ գանգատ եմ անելու, Դէ, լաւ, մի լաց լինիր, ոչ ոքին չեմ ասիլ։

Այս կարեկցական խօսքերն ու քնքշութիւնն աւելի ևս սաստկացրին մանկան լացի գրգիւը։ Այն ժամանակ աղջիկը պպզեց նրա կողքին։ Կէս ըոպէ այսպէս մընալուց յետով նա կամացուկ կպաւ կոյրի մազերին, զօյեց գլուխը և տապա, մայրական քնքուշ վճռականութեամբ, որը հանգստացնում էր իւր պատժուած երեխալին, բարձրացրեց նրա գլուխն ու սկսաւ թաշկինակով սրբել արտասուաթոր աչքերը։

— Դէ, լաւ, լաւ, հերիք է, ասաց նա հասակաւոր կնոջ եղանակով։ — Արդէն վաղուց է ես քեզ վրայ չեմ նեղանում։ Տեսնում եմ, որ զղջում ես ինձ վախացնելուդ համար...»

— Ես քեզ վախեցնել չէի ուզում, — ասաց նա խո-

ըլ թառանչ քաշելով, որպէս զի զսպէ իւր ջղալին գրգիռները:

— Լաւ, լաւ: Ել չեմ նեղանում... իսո մէկ էլ չես անիլ: — Նա տղին վեր կացրեց տեղից և աշխատում էր իւր կողքին նստացնել:

Պետրոյսը հնագանդում էր: Ալժմ նա նստած էր առաջուալ նման երեսն արևմտոց դարձրած, և երբ որ աղջիկը նորից նայեցաւ նրա դէմքին, որ կարմրաւուն ճառագալթներով էր լուսաւորուած, դարձեալ տարօրինակ թուեցաւ նրան ալդ դէմքը: Երեխի արտասուքի կաթիները դեռ ևս նրա աչքերի մէջ ցամաքած չէին, բայց ալդ աչքերը դարձեալ անշարժ էին առաջուալ նման. դէմքի գծերը շարունակ շարժւում էին ջղալին գրգունունքից, բայց դրանց մէջ միւնոյն ժամանակ էլ արտալայտուում էր ոչ-մանկական խորին ու ծանր վիշտ:

— Բայց և այնպէս շատ տարօրինակ տղալ ես դու, — ասաց աղջիկը մտախոհ կարեկցութեամբ:

— Ես տարօրինակ տղալ չեմ, — ասաց Պետրոյսը խղճալի ծամածութեամբ: — Ոչ, ես տարօրինակ չեմ... ես... ես — կոլը եմ:

— Կու ոյր, — երգելու նման երկարելով կը կնեց աղջիկը և նրա ձայնը գողդողաց, հէնց իմանաս կոլրի ցած ձայնով արտասանած ալդ տխուր խօսքը անջնջելի հարուած հասցրած լինէր նրա փոքրիկ կանացի սրտին: — Կու-ոյր, — կը կնեց նա աւելի ևս բեկբեկ ձայնով և, ասես թէ աշխատելով պաշտպանութիւն որոնել կարեկցութեան անընկճելի զգացումից, որ ամբողջովին համակել էր իրեն, նա յանկարծ ձեռները փարեց երեխի վզով և դէմքը խոնարհեց դէպի նա:

Ալս անտկնկալ ցաւալի լալտնութիւնից ապշած, փոքրիկ կինը անկարող եղաւ կանգնած մնալ իւր լըր-

զութեան բարձրութեան վրայ, և յանկարծ վշտահար և իւր վշտի առաջ անգօր կանգնած մի մանուկ դարձաւ ու սկսաւ ինքն էլ աղիողորմ ու անմիիթար լաց լինել:

## VI

Մի քանի ըոպէ լուռ անց կացաւ:

Աղջիկը լաց լինելուց դադարեց և երբեմն երբեմն միայն, չը կարողանալով իրեն զսպել, հեկեկում էր: Նա արտասուալից աչքերով նալում էր, թէ ինչպէս արեգակը ասես թէ արեմտոցի հրաշէկ մթնոլորտի մէջ թաւալուելով խորասուզւում էր հորիզոնի մթին գծի տակ: Մի անգամ էլ առփայլեցաւ հրեղէն գնդի ոսկեգոյն հատուածը, ապա դուրս ցալտեցին երկուերեք ջերմ կայծեր, և յանկարծ հեռաւոր անտառի մութ գծերը դուրս եկան միապաղադ կապտագոյն երիզի նման:

Գետի կողմից զովը փչեց և իրիկնապահի հանգուցիչ խաղաղութիւնը ցոլցաց կոյրի գէմքի վրայ: Նա գլուխը կախ նստած, ըստ երկութին, զարմացած էր աղջկալ ցոյց տուած ալդ ջերմ կարեկցութեան վրայ:

—Ես... քեզ... խղճում եմ, — վերջապէս ասաց աղջիկը դեռ էլի հեկեկալով՝ ուզելով իւր թուլութեան պատճառը բացատրել:

Ապա նա փոքր ինչ իրեն զսպելով փորձեց խօսակցութիւնը մի այնպիսի կողմնակի նիւթի վրայ դարձնել, որին երկուսն էլ կարողանալին անտարբերութեամբ վերաբերուել:

—Երևը մալր մտաւ, — ասաց նա մտախոհ:

—Ես չեմ իմանում, թէ ինչ տեսակ բան է դա, — վշտալի ձայնով պատասխանեց տղան: — Ես՝ արևը

միայն զգում եմ...

— Արևի ինչ եղածը չը գիտես:

— Ալո:

— Հապա... հապա մօրդ... նոյնպէս չգիտես:

— Մօրս գիտեմ: Ես միշտ հեռուից ճանաչում եմ նրա քայլուածքը:

— Ալո, ալո, ուղիղ է: Ես էլ եմ կարողանում փակ աչքերով մօրս ճանաչել:

Խօսակցութիւնն աւելի խաղաղ կերպարանք ստացաւ:

— Գիտէք,—ասաց կոլը փոքր ինչ աշխուժով, — ախր ես արեւ զգում եմ և գիտեմ, թէ երբ մալր մտաւ:

— Ինչից գիտես:

— Նրանից որ... գիտես...: Ես ինքս էլ չեմ իմանում ինչից...:

— Հա-ա,— ասաց աղջիկն ըստ երևութին բոլորովին գոհ մնալով այդ պատասխանից, և նրանք երկուսն էլ լուցին:

— Ես կարդալ էլ գիտեմ, — նորից խօսեց Պետրոյսը, — իսկ շուտով գըշով գըել էլ կը սովորեմ:

— Այդ ինչպէս..., — սկսեց աղջիկը և յանկարծ, չը ցանկանալով այդ նուրբ հարց ու փորձը շարունակել, լուց: Երեխան նրա միտքը հասկացաւ:

— Ես մատներով եմ կարդում իմ գիրքս, — բացատրեց նա:

— Մատներով: Ես երբէք չէի կարող մատներով կարդալ սովորել: Նոյն իսկ աշքով էլ վատ եմ կարդում ես: Հայրս ասում է, որ կանալք գիտութիւնը լաւ չեն կարող հասկանալ:

— Իսկ ես մինչեւ անգամ Փրանսերէն էլ կարող եմ կարդալ:

— Ֆրանսերէն... Այն էլ մատներով... ի՞նչ խելօք

տղայ ես, — անկեղծօրէն զմալլեցաւ աղջիկը: — Բայց ես վախեմ թէ մրսես: Տես ինչպիսի մառախուղ է պատել գետը:

— Հապա դժու:

— Ես չեմ վախում: Ինձ բնչ կարող է լինել:

— Եհ, ես էլ չեմ վախում: Միթէ կարելիք բան է, որ տղամարդը կնոջից շուտ մրսի: Քեռի Մակսիմն ասում է, որ տղամարդը ոչնչից չպիտի վախենալ. ոչ ցրտից, ոչ սովից, ոչ կալծակից, ոչ սև-սև ամպերից:

— Մակսիմը... այն՝ որ անթացուպով է ման գալիս.... Տեսել եմ: Սարսափելի մարդ է:

— Ոչ, ամենևին սարսափելի չէ: Նա—բարի է:

— Ոչ, սարսափելի է, — համոզուած կրկնեց աղջիկը: — Նրան չես ճանաչում, որովհետև չես տեսել:

— Ինչպէս թէ չեմ ճանաչում, քանի որ նա է ինձ ամեն բան սովորեցնողը:

— Ծեծում է:

— Երբէք չէ ծեծում և չի էլ գորգոռում վրաս... երբէք...

— Այդ լաւ է: Միթէ կարելի է կոյր տղի ծեծել: Մեղք է հոգու:

— Նա ոչ ոքի էլ չի ծեծում, — ասաց Պետրոլսը փոքը ինչ անուշադիր, որովհետև նրա սուր ականջին դիպել էր Խօխիմի ոտների ձախը:

Յիրաւի, մի վայրկեան լետոյ ագարակը գետափից բաժանող բլրաշարքի գագաթին երևաց խախօլի լաղթանդամ պատկերը և նրա ձախնը երեկոյեան լոռութեան մէջ որոտաց հեռուն:

— Պանի-չու-նւ:

— Քեզ են կանչում, — ասաց աղջիկը տեղից վեր կենալով:

— Այուս Բայց ես չէի ուզիլ գնալ:

— Գնա, գնա, վաղը կ' դամ։ Ալժմ քեզ սպասում  
են, ինձ էլ նորնալէս։

## VII

Աղջիկը ճշտութեամբ կատարեց իւր խոստումը և  
աւելի շուտ, քան թէ կ'յուսար Պետրոյսը։ Հէնց միւս  
օրը, երբ իւր սենեակում Մակսիմի հետ սովորական  
ժամին դասի էր նստած, յանկարծ նա գլուխը բարձ-  
րացրեց, ականջ դրաւ և աշխուժով ասաց։

— Թոյլ տուր մի ըոպէ գնամ։ Աղջիկը եկաւ։

— Ի՞նչ աղջիկ, — զարմացաւ Մակսիմը և հետևեց  
տղին դէպի դուրս գնացող դուռը։

Եւ լիրաւի, հէնց այդ ըոպէին ագարակի բակը մը-  
տաւ Պետրոյսի երէկուայ ծանօթ աղջիկը և տեսնելով  
Աննա Միխալլովնային, որ անց էր կենում բակով, հա-  
մարձակ կերպով ուղղակի մօտեցաւ նրան։

— Ի՞նչ ես ուզում, աղջիկս, — հարցրեց Աննա Մի-  
խալլովնան կարծելով, թէ նրան բանի են ուղարկել։

Փոքրիկ կինը լըջօրէն ձեռքը մեկնեց նրան և  
հարցրեց։

— Այն կոյր տղան Զերն է... հա։

— Այո, իմս է, հոգիս, իմս է, — պատասխանեց պա-  
նի Պոպէլսկալան, հրճուանքով նայելով նրա վճիտ աչ-  
քերին ու համարձակ վարմունքին։

— Դիտէք, մայրիկս ինձ թոյլ տուաւ նրա մօտ  
գալու։ Կարո՞ղ եմ նրան տեսնել։

Այդ միջոցին Պետրոյսն ինքը վազեց եկաւ նրա  
մօտ, իսկ դստիկոնի վրայ երեաց Մակսիմը։

— Երեկուալ աղջիկն է, մայրիկ։ Քեզ արդէն պատ-  
մել եմ, — ասաց տղան բարևելով իւր ծանօթուհուն։ —  
Բայց ես ալժմ դաս ունիմ։

— Դէ լաւ, այս անդամ քեռի Մակսիմը կ'արձակէ քեզ, — ասաց Աննա Միխալովնան, ես ինքս կը խնդրեմ:

Իսկ ալդ միջոցին փոքրիկ կինը, որ ըստ երևութին բոլորովին ազատ էր զգում իրեն, ընդառաջ գնաց Մակսիմին; որ իւր անթացուպերով մօտենում էր նըրանց, և ձեռք տալով ասաց նրան վեհանձն հաւանութեան եղանակով.

— Ալդ լաւ է, որ Դուք կոյր տղին չէք ծեծում: Նա ինձ ասել է ալդ:

— Միթէ, տիկին, — ծաղրական լրջութեամբ հարցրեց Մակսիմը իւր լատն ձեռքի մէջ առնելով աղջկայ մանրիկ ձեռքը: — Որչափ շնորհապարտ եմ սանիցս, որ կարողացել է Զեղ նման մի գեղանի անձի տրամադրել յօգուտ իմ:

Եւ Մակսիմը ծիծաղեց շոյելով նրա ձեռքը, որ բոնած էր իւր ձեռների մէջ: Իսկ աղջիկը իւր պարզ, բաց հայեացքով դեռ էլի նայում էր նրան, որը միանգամայն գրաւել էր իւր կնատեաց սիրտը:

— Հասպա մի տես, Աննուսիա, — ասաց նա քրոջը՝ օտարօտի ժպիտը երեսին: — Մեր Պետրոյսը սկսել է անկախորէն ծանօթներ ճարել: Եւ, համաձայնիր, Անիա... չնայելով, որ կոյր է, բայց և այնպէս լաւ ընտրութիւն է արել, այնպէս չէ:

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել, Մակս, — իստութեամբ հարցրեց նորատի կինը և ալ կարմիրը ծածկեց նրա դէմքը:

— Հանաք եմ անում, — կարճ պատասխանեց եղբայրը տեսնելով, որ իւր հանաքով շարժել էր քրոջ սրտի ցաւագար լարը, մերկացրել էր նրա մալրական կանխատեսող սրտում շարժուող ծածուկ միտքը:

Աննա Միխայլովնան աւելի ևս շառագունեցաւ և շտապով կուացաւ ու ջերմ քնքշութեամբ ուժգին գըր-

կախառնեց աղջկան, որը գարձեալ նոյն պարզ, թէպէտ փոքր ինչ զարմացած հալեացքով ընդունեց ալդ անակընկալ բուռն փաղաքշանքը:

### VIII

Ալդ օրից ամենամօտ լարաբերութիւններ սկսուեցան հարևան կապալառուի տնակի ու Պոպէլսկու ապարանքի միջև։ Աղջիկը, որի անունը Եւելինա էր, ամեն օր գալիս էր ապարանք, իսկ մի փոքր ժամանակից նա էլ դարձաւ Մակսիմի աշակերտ։ Սկզբում ալս միատեղ ուսուցանելու ծրագիրը մի անքան էլ դիւր չէր գալիս պան Եասկուլսկուն։ Նախ որ նա այն կարծիքի էր, թէ այն էլ բոլորովին բաւական է, եթէ կինը կարող կը լինի սպիտակեղէնի հաշիւն ու տնային ելեմտից մատեանը պահել։ Երկրորդ նա զուտ կաթողիկ էր և կարծում էր, թէ Մակսիմը հակառակ «հայր-պապէժի» ակնլայտնի կամքին չպէտք է Աւստրիացիների դէմ կռուած լինէր։ Վերջապէս նա հաստատապէս համոգուած էր, որ երկնքում կալ Աստուած, իսկ Վոլտէրն<sup>1)</sup> ու վոլտէրականները դժոխքում եռ են գալիս կպրէ կարասի մէջ։ Իսկ ալդպիսի վիճակ է սպասում նաև, շատերի կարծիքով, Մակսիմին։ Մակայն աւելի մօտիկ ծանօթանալով տեսաւ, որ ալդ հերետիկոսն ու խռովարը շատ քաղցր բնաւորութեան ու մեծ խելքի տէր մարդ է, ուստի հէնց ալդ պատճառով էլ նա զիջաւ։

1) Վոլտէրը պատկանում է այն փայլուն էնցիլոպեդիստների խմբին, որոնք Դիերոյի և Դ'Ալամբերդի գլխաւոր խմբագրութեամբ 1751—1772 թիւը Պարիզում հրատարակեցին հըռչակաւոր Փրանսիական էնցիլոպեդիայի (համագիտական բառարանը, որը իւր ժամանակի յառաջադէմ գաղափարների արտայայտիչ լինելով, հիմն ի վեր տապալեց բոլոր հին հայեացք-

Բայց և այնպէս դարձեալ շատ հանգիստ չէր հին շլեախտիչի սկրտը, ուստի և նա իւր աղջկան առաջին անգամ դասի բերելով պատշաճ համարեց նրան մի հանգիստոր ու փքուն ճառ ասել, որը սակայն աւելի Մակսիմի համար էր նշանակուած:

—Այ ինչ կայ, Վելիա, —ասաց նա իւր աղջկալ ուսից բռնելով, բայց աչքերը նրա ապագայ ուսուցչին ուղղելով: —Միշտ մտիդ լինի, որ երկնքում կայ Աստուած, իսկ Հռօմում նրա սուրբը «պապէժը»: Ես եմ, Վալենտին Եասկուլսկիս քեզ այս ասողը, և դու պէտք է հաւատաս ինձ, որովհետեւ ես քու հալրդ եմ, —այս քրիմո:

Այս ասելով նա մի նոր ազդու հալեացք էլ ձգեց Մակսիմի կողմը. Պան Եասկուլսկին առանձնապէս շեշտում էր իւր արտասանած լատիներէն բառերի վրայ ուղելով հասկացնել, թէ ինքն էլ շատ հեռու չէ զիտութիւնից և իրեն խաբելը հեշտ չէ:

—Secondo, ես — ֆառաւոր տոհմադրոշ կրող շլեախտիչ եմ, իսկ իգուր չէ տոհմադրոշիս վրայ ոխուրձ և ագռաւի « հետ նաև կապուտ լուսանցքում խաչ նկա-

---

ները՝ հաստրակական, սոցիալական, քաղաքական, կրօնական: Ոյդ իսկ պատճառով բոլոր ազատ հայեացքների տէր մարդկանց, թէպէտ նրանք յիշեալ բառարանի խմբագրութեանը մասնակից էլ եղած վինէին, էնցիկլոպեդիստ էին անուանում: Վոլտերը ծն. 1694 թ. և իւր կրթութիւնը ստացել է ճիզուիտների մօտ, որոնց ամենաոխերիմ թշնամին դարձաւ նա. իւր հատու լեզուն ու գրիչը քանի անգամ նրան պատճառ դարձան բանտ նստելու, երկրից տարագիր լինելու: Նա գրում էր տրագեդիաներ ու զանազան յօդուածներ, որոնց մէջ անխնայ հարուածելով կեանքի չարիքն ու ստութիւնը, արծարծում էր իւր հայեացքները. նրա սփիլիսովիայական նամականին այրեցին հակակրօնական ուղղութեան պատճառով: Վախճ. 1778.:

բուած։ Եսակուլսկիները լաւ ասպետ լինելով հանդերձ շատ անգամ սուրբ փոխարէն աղօթագիրք են առել ձեռները և երկնալին խնդիրներում փոքր ի շատէ բան հասկացել, ահա թէ ինչու պէտք է դու ինձ հաւատաս։ Իսկ մնացած բաներում, ինչ որ վերաբերում է orbis terrarum-ին, ալսինքն այն բոլորին, որ աշխարհային է, հետեւիր պան Մակսիմ Եացենկոյի ասածին և լաւ սովորիր։

—Մի վախենաք, պան Վալենտին, —ժպտալով պատասխանեց նրա ճառին Մակսիմը, —մենք Գարիբադիի բանակի համար պաննիներ չենք ժողովում։

## IX.

Երկսի համար էլ շատ օգտակար եղաւ միատեղ ուսանիլը։ Պետրոյսն, իհարկէ, առաջընթաց էր, բայց դա արգելք չէր մըցման։ Բացի այդ նա շատ անգամ աղջկան օգնում էր դասը սովորելու, իսկ աղջիկն էլ երբեմն շատ աջող ձեռը էր գտնում բացադրելու համար այնպիսի բաներ, որոնք գժուար հասկանալի էին լինում նրա, կոյրի համար։ Բացի այդ, աղջկալ ընկերակցութիւնը մի առանձին, ուրոյն բան էր մտցնում կոյրի պարապմունքի մէջ։ Նրա մտաւոր աշխատութեանը մի տեսակ հաճելի գրգռման առանձին գոյն էր տալիս։

Առ հասարակ բարեհաճ բաղդի ճշմարիտ նուէր էր այս բարեկամութիւնը։ Այժմ արդէն կատարեալ առանձնութիւն չէր որոնում տղան, նա գտել էր այն ընկերակցութիւնը, որ հասակաւորների սէրը կարող չէր տալ նրան, և հոգեկան զգաստ անդորրութեան ըոպէներում նրա համար հաճելի էր աղջկալ մօտիկութիւնը։ Նրանք միշտ միասին էին քարափը կամ գետեզը գնում։

Երբ Պետրոյսն ածում էր իւր սրինգը, աղջիկը անմեղ հիացմամբ ականջ էր դնում նրան, իսկ երբ դադարում էր ածելուց, նա սկսում էր կոլրին պատմել շըջապատող բնութիւնից ստացած իւր մանկական վառ տպաւրութիւնները: Իհարկէ, նա այդ չէր կարողանում համապատասխան բառերով լիալիր ամբողջութեամբ արտալատել, բայց դրա փոխարէն կոլը նրա պատմուածքից, նրա ձայնի եղանակից ըմբռնում էր նկարագրած ամեն մի երևոյթի բնորոշ կողմը: Այսպէս օրինակ, երբ որ աղջիկը խօսում էր երկրիս երեսին տարածուածխոնաւ և խաւարչտին գիշերուալ մթութեան մասին, նա աղջկայ վեհերկոտ ձայնի զսպուած հունչի մէջ տսես թէ լսում էր այդ մթութիւնը: Իսկ երբ էվելինան իւր մտախոհ դէմքը վեր բարձրացնելով նրան հաղորդում էր՝ «ահ, ինչպիսէ ամպէ գալիս, ի՞նչ սև, սևաթոյը ամպ»— նա կարծես անմիջապէս մի սառն հովն էր ըգգում և իւր ընկերուհու ձայնի մէջ լսում էր մի տեղ, հեռաւոր բարձունքներում երկնքի երեսից սողացող հրէշի վախ ազգող շշուկը:

Դ. ԳԼՈՒԽ.

I

Կան բնաւորութիւններ, որոնք կարծես ի սկզբանէ անտի կոչուած են թախծի և խնամածութեան հետ խառն՝ սիրոյ խաղաղ քաջագործութեան համար,— բնաւորութիւններ, որոնց համար ուրիշների վիշտն ամոքելը կարծես թէ իրենց մթնոլորտը, կենսական պա-

Հանջն է կազմում։ Բնութիւնը նրանց կանխօրէն պարգևել է անվրդով բնաւորութիւն, առանց որի կեանքի սոսկական քաջագործութիւնն անհնար է։ բնութիւնը նախատեսութեամբ մեղմել է նրանց անձնական բուռն լոլերը անձնական կեանքի պահանջները՝ այդ լոլերն ու պահանջները ստորադրելով նրանց բնաւորութեան տիրապետող կողմերին։ Արդպիսի անհատներն, լաճախ, չափազանց սառն, չափազանց խոհեմ, զգացումից զուրկ են թւում։ Նրանք խուլ են մեղսական կեանքի բուռն հրապոլներին, և պարտականութեան տիսուր ճանապարհով ընթանում են նոյնպէս խաղաղ, ինչպէս և անձնական ամենապայծառ երջանկութեան ճանապարհով։ Նրանք թւում են սառն՝ որպէս լեռների ձիւնապատ կատարները—և նրանց նման էլ վեհ են։ Կեանքի վատթարութիւնները փուռած են նրանց ոտների տակ, նոյն իսկ զրպարտութիւնն ու բամբասանքը ցած են գլորւում նրանց ձիւնափայլ զգեստի վրալից, որպէս ցեխի ցալտերը կարապի թեերից...

Պետրոսի փոքրիկ բարեկամուհին այս տիպարի բռլոր կողմերն ունէր իւր մէջ, մի տիպար, որ կեանքն ու դաստիարակութիւնը շատ հազիւ են մշակում,—դա ինչպէս տաղանդը, ինչպէս հանճարը միալն ընարեալ բնաւորութիւններին է վիճակում և վաղ էլ արտայալտում է։ Կոլրի մայրը հասկանում էր, թէ դիպուածը ի՞նչ բաղդ էր ուղարկել իւր որդուն այս մանկական բարեկամութեամբ։ Այդ հասկանում էր նաև ծերունի Մակսիմը, որին թւում էր, թէ այժմ արդէն իւր սանիկն ունի այն ամենը, ինչ նրան դեռ պակասում էր և թէ ալսուհետեւ նրա հոգեկան զարգացումը առաջ կ'գնալ հանդարտ, հաւասար և ոչնչով չխանգարուող ճանապարհով...։

Բայց դառն մոլորութիւն էր այդ։

II

Մակսիմը կարծում էր, թէ մանկան կեանքի առաջին տարիներում նրա հոգեկան աճելութիւնը բոլորովին իւր ձեռքն է, թէ այդ աճելութիւնը կատարում է եթէ ոչ իւր անմիջական ազդեցութեամբ, գէթ, յամենայն դէպս, նրանց ոչ մի նոր կողմը, նրա հոգեկան շըրջանում ձեռք բերուած ոչ մի բան իւր դիտողութիւնից և վերահսկողութիւնից կարող չէ խոլս տալ: Բայց երբ հասաւ մանկան կեանքի այն շրջանը, որ մանկութեան և պատանեկութեան անցողական սահմանն է կազմում, Մակսիմը տեսաւ, թէ որքան անհիմն են եղել իւր այդ մանկավարժական անձնապաստան ցնորքները: Համարեաթէ ամեն մի շաբաթ իւր հետը բերում էր մի նոր, երբեմն կոյրի վերաբերմամբ մի անակնկալ բան, և երբ Մակսիմը ճիգ էր թափում մանկան մէջ երեան եկած մի որ և իցէ նոր գաղափարի կամ պատկերացման աղբեւրները գտնել, բոլորովին մնում էր շուար: Մի աներեսոյթ զօրութիւն աշխատում էր մանկական հոգու խորքերում՝ ալդ խորքերից երեան հանելով հոգեկան ինքնուրոյն աճելութեան անակնկալ երեսոյթները. և Մակսիմը խորին ակնածութեամբ կանգ էր առնում կեանքի այդ խորհրդաւոր գործողութեան առաջ, որոնք այսպէս միջամտում էին իւր մանկավարժական աշխատութեանը: Բնութեան այս զարկերը, նրա ձրի լալանութիւնները, ըստ երեսութին, մանկանը այնպիսի պատկերացումներ էին մատակարարում, որոնք կարող չէին նրան անձնական փորձով մատչելի դառնալ, և Մակսիմըն ալստեղ ըմբռնում էր կեանքի երեսոյթների այն անքակտելի կապը, որը հաջարաւոր գործառնութիւնների տրոհուելով անցնում է առանձին կեանքերի լաջորդական կարգի միջով:

Սկզբում այս դիտողութիւնը վախեցրեց Մակսիմին։ Տեսնելով, որ միմիայն իւր ձեռին չէ մանկան մտաւոր կազմը, որ այդ կազմի մէջ երևում է երկնից անկախ և իւր ազգեցութեան շրջանից խուսափսղ մի բան, նա միսաւ երկիւղ կը ել իւր սանիկի վիճակի մասին, նա վախեցաւ, թէ մի՛ գուցէ այնպիսի պահանջներ ծնուին նրա մէջ, որ միայն անյագ տանջանքների պատճառ գառնան կոյրի համար։ Եւ նա փորձում էր գտնել այդ, անյալու տեղից դուրս ցալտող աղբիւրների ակունքը, որպէս զի խցէ նրանց առ միշտ... կոյրի բարօրութեան համար։

Այս անակնկալ առկայծումները չխուսափեցին և մօր ուշադրութիւնից։

Մի անգամ առաւօտեան Պետրիկը անսովոր լուգմամբ վագեց նրա մօտ։

— Մալրիկ, մալրիկ, — կանչեց նա, — ես երազ տեսայ։

— Ի՞նչ տեսար, զաւակս, — հարցրեց նա և նրա ձայնը տխուր կասկած էր արտայալտում։

— Երազումս տեսալ, որ... քեզ և Մակսիմին եմ տեսնում, և էլի... որ ամեն բան տեսնում եմ...։ Ինչքան լաւ, ինչքան լաւ էր, մալրիկ զան։

— Ել ի՞նչ տեսար, զաւակս։

— Չեմ լիշում։

— Իսկ ինձ լիշում ես։

— Ոչ, — պատասխանեց տղան մտախոհութեամբ։ — Բոլորն էլ մոռացել եմ...։ Բայց և այնպէս ես տեսալ, ճիշդ եմ ասում, տեսալ... — աւելացրեց նա ըոպէական ըռութիւնից լետոյ, և նրա դէմքը մոալլեց իսկոյն։ Եւ արտասուքի կաթիլները փալլեցին նրա անլուս աչքերի մէջ...։

Այս բանը մի քանի անգամ դարձեալ կը կնուեց և ամեն անգամ տղան աւելի ու աւելի տխրում էր և վրդովւում։

III

Մի անգամ Մակսիմը բակովն անցնելիս լսեց, որ ընդունարաժնից, ուր սովորաբար երաժշտութեան դասերն էին տրւում, երաժշտութեան տարօրինակ փորձերի ձալներ են գալիս։ Այդ փորձերը երկու ձալնից էին կազմուած միայն։ Նախ արագութեամբ իրար լաջորդող, համարեա ի մի ձուլուած հարուածներից դողդողում էր վերին կարգի ամենաբարձր սլայծառ մի հընչիւնը. լետոյ յանկարծ դրան փոխանակում էր բամբի ստորին որոտը. Հետաքրքրությով իմանալ, թէ ինչ էր նշանակում այս տարօրինակ փորձերը, Մակսիմը կաղի տալով անցաւ բակը և մի ըսպէից լետոյ մտաւ ընդունարան։ Նա դրան մէջ տրձանացած կանգ առաւ հետեւեալ անսպասելի պատկերի առաջ։

Տղան, որ արդէն տասներորդ տարին էր թևակոխել, ցածլիկ աթոռի վրայ նստած էր մօր ոտների մօտ։ Նրա կողքին, վիզը ձգձգած և երկար կտուցը չորս կող մը դարձնելով կանգնած էր մի ձեռնասուն ջահիլ արագիլ, որ Խօսիմն էր ընծալել «պանիչին»։ Տղան ամեն առաւօտ իւր ձեռքով կերակրում էր արագիլին և թըրցունը ամեն տեղ ուղեկցում էր իւր նոր ընկեր-տիրոջը։ Պետրոյսն ալժմ մի ձեռքով բռնել էր արագիլը, իսկ միւս ձեռքը, սաստիկ մտազբաղ ուշադրութեան արտայալտութիւնը դէմքին, զգուշութեամբ անց էր կացնում թուշունի զգի երկարութեամբ, ապա և իրանի վրայով։ Հէնց այդ միջոցին մալրը բոցավառ, լուզուած դէմքով և տխուր նայուածքով, արագութեամբ խփում էր գաշնամուրի մատին և միապաղաղ բարձր հնչիւն հանում։ Միւնոյն ժամանակ նա նստած տեղից թեթեւակի ծռուելով ցաւագար ուշադրութեամբ դիտում էր իւր որդու դէմքը։ Խոկ երբ տղի ձեռքը պայծառ-սպի-.

տակ փետուրների վրայից սահելով հասնում էր այն-  
տեղ, ուր այդ փետուրները թևերի ծայրերին անմիջա-  
պէս սևի էին փոխում, Աննա Միխալլովնան ձեռքն  
անմիջապէս միւս ստեղնի վրայ էր տանում և բամբի  
ցած ձալնը խուլ որոտում էր սենեակի մէջ:

Մայր որ որդի, երկուսն էլ, ալնքան խորասուզուած  
էին իրենց զբաղմունքի մէջ, որ չնկատեցին Մակսիմի  
գալը, մինչեւ որ նա ինքն էլ զարմանքից սթափուելով,  
ընդհատեց այդ վարժութիւնը հարցնելով.

— Սա ինչ բան է, Աննուսիա:

Նորտակ կինը Մակսիմի փորձող հայեացքին հան-  
գիպելով տմաշեց՝ հէնց իմանաս յանցագործութեան մի-  
ջոցին խստապահանջ ուսուցիչը վրայ հասած լինէր:

— Այ, գիտես, — շփոթուած ասաց նա, — Պետրովն  
ասում է, թէ կարողանում է փոքր ինչ ջոկել արագլի  
գոյնի տարբերութիւնը, միայն թէ չէ կարողանում պարզ  
ըմբռնել, թէ ինչումն է այդ տարբերութիւնը...: Ճիշդ  
եմ ասում, առաջին անգամ ինքը սկսեց այդ մասին խօ-  
սել, և ինձ թուում է, թէ այդ ուղիղ է...:

— Է՛, լետոյ ինչ...

— Ոչինչ, ես ուզեցի նրան . . փոքր ինչ... ձայնե-  
րի զանազանութեամբ բացատրել այդ տարբերութիւ-  
նը...: Մի նեղանալ, Մակս, բայց ճշմարիտ, կարծում  
եմ, որ դա շատ նման է...:

Այս անակնկալ գաղափարը ալնպէս ապշեցրեց Մակ-  
սիմին, որ նա սկզբում չէր իմանում, թէ ինչ ասէր  
քրոջը: Նա կրկնել տուեց փորձերը և, գիտելով կորի  
գէմքի լարուած արտայալտութիւնը, գլուխը շարժեց:

— Գիտես ինչ, Աննա, — ասաց նա երբ որ քրոջ հետ  
մենակ մնաց, - չպէտք է մանուկի մէջ այնպիսի հար-  
ցեր ծնեցնես, որոնց դու երբէք, երբէք չպիտի կարո-  
ղանաս լրիւ պատասխան տալ:

Բայց ախր առաջին անգամ հէնց երեխան ինքը սկսեց խօսել այդ մասին... ուղիղ եմ ասում... ընդհատեց Աննա Միխալլովնան:

—Այդ միևնունն է: Մի բան է միայն մնում երեխին՝ որ իւր կուրութեանն ընտելանալ, իսկ մենք պէտք է ձգտենք, որ նա լոյսի մասին մոռանալ.... Ես աշխատում եմ, որ ոչ մի արտաքին դրդիչ նրա մէջ անպըտուղ հարցեր չծնեցնէ, և եթէ որ հնարաւոր լինէր հեռացնել այդ դրդիչները, այն ժամանակ երեխան չէր զգալ իւր զգայարանքի պակասը, ինչպէս որ մենք, որ բոլոր հինգ զգայարանքներն ունենալով չենք վշտանում, որ վեցերորդը չունինք:

—Մենք տիրում ենք... — յաճ ձայնով պատասխանեց նորատի կինը:

—Անիա:

—Մենք տիրում ենք, — յամառութեամբ պատասխանեց նա, — մենք շտա անգամ տիրում ենք անհնարինի մասին մտածելով:

Սակայն քոյլը խոնարհեցաւ իւր եղբօր պատճառաբանութեան առաջ. բայց այս անգամ Մակսիմը սխալ-տում էր՝ աշխատելով արտաքին դրդիչ պատճառները հեռացնել, նա մոռանում էր այն զօրեղ դրդիչները, որ ինքը բնութիւնն էր ձգել մանկական հոգու մէջ:

#### IV

«Աչքը հոգու հայելին է» ասում են: Գուցէ աւելի ուղիղ կ'լինէր, եթէ աչքը նմանեցնէինք պատուհանի, որով պայծառ, փալլուն գունաւոր աշխարհիս տպաւորութիւնները շեղւում են հոգու մէջ: Ով կարող է ասել, թէ մեր հոգեկան կազմուածքի ո՞ր մասն է լուսի տպաւորութիւնից կախուած:

Մարդս — կեանքերի անսահման շղթալի մի օղակն

է, և ալդ շղթան նրա միջոցով խոր անցեալից գալով շարունակում է դէպի անսահման ապագան: Եւ ահա, օրհասական դիպուածով, ալդ օղակներից մէկի, կոյր երեխալի, ալդ պատուհանները փակ էին՝ կեանքն ամբողջապէս խաւարի մէջ պիտի անց կենալ: Բայց միթէ աս նշանակում է, թէ նրա հոգու մէջ առ միշտ կըտրուած են այն լարերը, որոնց շնորհիւ մարդուս հոգին արձագանգ է տալիս լոյսի տպաւորութիւններին: Ոչ, և ալդ խաւար գոյութեան միջոցով էլ պէտք է շարունակուէր և յաջորդ սերունդներին աւանդուէր լոյսն ըմբռնելու ներքին ընդունակութիւնը: Նրա հոգին մարդկալին լիալիր (կոյս) հոգի էր՝ իւր բոլոր ընդունակութիւններով. և որովհետեւ իւրաքանչիւր ընդունակութիւն ինքն իւր մէջ ունի գոհացում ստանալու ձգտում, ուստի և երեխալի խաւար հոգու մէջ ևս ապրում էր անյագ ձգտումն դէպի լոյս:

Խորհրդաւոր խորութեան մէջ, մի տեղ, անձեռնմըխելի մնացել էին ժառանգարար ստացած և «Հնարաւորութիւնների» նսեմ գոյութեան մէջ նիրհող ոլժերը, որոնք հէնց առաջին լուսաւոր ճառագալթից պատրաստ էին նրան ընդառաջելու: Բայց պատուհանները փակ են մնում. երեխալի ճակաստագիրը որոշուած է՝ նա երբէք տեսնելու չէ ալդ ճառագալթը. նրա ամբողջ կեանքը խաւարի մէջ կ'անց կենալ...

Բայց ալդ խաւարը լի էր ուրուականներով:

Եթէ երեխալի կեանքը կարիքի և վշտերի մէջ անցնելիս լինէր, գուցէ այն ժամանակ նրա ուշքը դառնար տանջանքների արտաքին պատճառների վրայ: Բայց նըրա մերձաւորները նրանից հեռացրել էին այն ամենը, որ կարող էր վեշտ պատճառել նրան: Կատարեալ հանգիստ և անդորրութիւն էին տուել նրան: Սակայն հէնց նրա հոգու մէջ տիրող ալդ խաղաղութիւնն էր նպաս-

տում, որ նրա ներքին անգոհացումն առաւել ևս ըգգալի էր գառնում: Նրան շրջապատող լոռվթեան և խաւարի միջից լարութիւն էր առնում մի ինչ որ կարեքի ազօտ անլուռ զիտակցութիւն, որ գոհացում էր որոնում, երևան էր գալիս հոգու մէջ նիրհող և ելք չգտնող ոլժերը ձեակերպելու ձգտում:

Եւ ահա սրանից էլ ծնունդ էին առնում մի տեսակ անորոշ նախագդացումներ և բուռն արտայալտութիւններ, նման թռչելու այն ձգտման, որ ամէն մէկս Ֆանկական հասակում զգացել ենք և որն ալդ տարիքում հրաշալի երազներով է արտայալտում:

Վերջապէս գրանից էին բղխում մանկական մտքի բնագդական խոնջութիւնները, որոնք, որպէս յաւագար հարցեր, ցոլանում էին նրա գէմքի վրալ: Այս ժառանգական, բայց անձնական կեանքում անձեռնմխելի մնացած լուսոյ պատկերացման «Հնարաւորութիւնները» որպէս ուրուականներ անկերպարան, ազօտ և մուժ բարձրանում էին մանկական գլխում՝ չարատանջ և անորոշ ճիգեր առաջացնելով:

Բնութիւնը անգիտակցական բողոք էր հանդիսանում այս անհատական դիպուածի դէմ, որով ընդհանուր օրէնքը խանգարուած էր:

## V

Ասպէսով, որքան էլ որ Մակսիմն աշխատէր հեռացնել բոլոր արտաքին դրդիշները, երբէք չէր կարող ոչնչացնել գոհացում չստացած կարիքի ներքին ճնշումը: Ամենաշատը, որ նա իւր շրջահայեցութեամբ կարող էր անել, ալդ այն էր, որ կոլրի մէջ ալդ կարիքները ժամանակից առաջ չզարթնեն, որ նրա տանջանք ները չուաստկանան: Իսկ մնացեալի մէջ՝ երեխալի ծանր

վիճակը պէտք է առաջանար ըստ կարգին՝ իւր բոլոր  
գաժան հետևանքներով:

Եւ նրա ճակատագիրը սեաթոյր ամպի նման կու-  
տակւում էր: Տարէց տարի նրա ընդոծին առուգութիւ-  
նըն ևս, նման նուազող ալիքի, աւելի ու աւելի անհե-  
տանում էր, մինչ նրա հոգու մէջ անորոշ, անընդհատ  
հնչող տխուր տրամադրութիւնը զօրանում էր և ար-  
տայալուում խառնուածքի մէջ: Ծիծաղը, որ նրա ման-  
կական հասակում կարելի էր լսել ամեն մի նոր ա-  
ռանձնապէս պայծառ տպաւորութեան միջոցին, ալժմ  
առաւել և տոտել պակաս էր լսում: Այն ամենը, որ  
ծիծուն էր, զուարթ, իւր վրայ երգիծական կնիք կը  
բում, հազիւ մատչելի էր նրան. մինչդեռ ամեն մի  
նսեմ, անորոշ-տխուր և մուալլմելամազալին բան, որ  
արտայալուում է հարաւալին ընութեան մէջ և ար-  
ձագանգ գտնում ժողովրդական երգերում, զարմանալի  
լրութեամբ ըմբռնում էր նա: Նրա աչքերը լցում էին  
արտասուքով ամեն տնգամ, երբ լսում էր, թէ ինչպէս  
«գերեզմանը դաշտում քամու հետ է խօսում».<sup>1)</sup> և հէնց  
ինքն էլ սիրում էր գնալ դաշտ և այդ զբոյցը լսել:  
Առանձնանալու հակումն աւելի ու աւելի զօրանում էր  
նրա մէջ, և երբ, պարապմունքից ազատ ժամերին,  
մենակ գնում էր իւր առանձին զբօսանքներն անելու,  
տնեցիներն աշխատում էին չգնալ այն կողմը, որպէս զի  
նրա առանձնութիւնը չխանգարեն: Նստում էր տափաս-  
տանում մի որեկցէ խուրդոնի վրայ, կամ գետափին բըլ-  
րակի գլխին, կամ վերջապէս լաւ ծանօթ քարափի վը-  
րայ, և լսում լոկ տերևների սօսափիւնը և արօտի  
շշունչը կամ տափասաանում փչող հովի անորոշ թա-  
ռանչը: Եւ այս ամենը առանձնապէս ներդաշնակւում

<sup>1)</sup> Въ полі могыла въ вітромъ говорила.

Էր նրա հոգեկան տրամադրութեան խորութեան հետ:  
Նա ալստեղ բնութիւնը հասկանում էր լրիւ, ամբողջապէս, որքան որ դա մատչելի էր նրա ըմբռնղութեանը: Ալստեղ բնութիւնը ոչ մի որոշ և անլուծանելի հարցերով չէր վրդովում նրան. ալստեղ այդ հովը ուղղակի գեղում էր նրա հոգու մէջ, իսկ արօտն ասես թէ կարեկցական հանգուցիչ խօսքեր է զշնչում, և երբ պատանու հոգին շրջապատող խաղաղ ներդաշնակութեամբ համակուած քնքշանում էր բնութեան ջերմ գուրգուրանքից, նա զգում էր, թէ ինչպէս մի բան բարձրանում է իւր կրծքի միջից, որ աւելի ու աւելի լորդանում է և սփուռում ամբողջ էութեան մէջ: Այս ժամանակ նա երեսի վրայ վեր էր ընկնում խոնաւկեկ զով արօտի վրայ և հանգարտ լաց լինում. բայց այդ արտասուքի մէջ դառնութիւն չկար: Իսկ երբեմն էլ վեր էր առնում իւր սրինգը և իւր տրամադրութեան ու տափաստանի խաղաղ ներդաշնակութեան յարմարաւոր մտախոհ մեղեդիներ ածելով բոլորվին մոռացութեան մէջ ընկնում:

Հսկանալի է, որ ամեն մի մարդկալին ձայն, որ ալսպիսի տրամադրութեան մէջ լսում էր, ցաւագար, խիստ աններդաշնակ ներգործութիւն պիտի ունենար նրա վրայ: Այդպիսի բոպէներում միմիայն ամենամօտիկ և մտերիմ հոգու հետ կարելի է հաղորդակցել. իսկ տղան միայն մի հատ այդպիսի բարեկամ ունէր— հարեան կապալառուի դեղձան մազերով աղջիկը....

Եւ այդ բարեկամութիւնն աւելի ու աւելի սերտանում էր կատարեալ փոխադարձութեամբ: Եթէ եւելինան իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ մտցնում էր իւր անվրդովութիւնն, իւր խաղաղ զուարթութիւնը, կոլըին ծանօթացնում էր շրջապատող կեանքի նորանոր երանգների հետ, կոլըն էլ իւր կողմից նրան

Համակում էր... իւր վշտով։ Երեսում է կոյրի հետ ունեցած առաջին ծանօթութիւնը արիւնահեղ վէրք էր պատճառել փոքրիկ կնոջ զգալուն սրտին՝ հանեցէք վէրքից հարուածող դաշոյնը և վէրքը արիւնաքամ կը լինի։ Առաջին անգամ տափաստանում բըրակի վրայ ծանօթանալով կոյրի հետ, մանկահասակ կինը համակրութեան սուր տանջանք էր զգացել իւր սըրտում, և այժմ կոյրի ներկայութիւնն աւելի ու աւելի անհրաժեշտ էր դառնում նրա համար։ Անջատման միջոցին կարծես թէ վէրքը նորից էր բացւում, ցաւը նորոգւում, և նա շտապում էր դէպի իւր փոքրիկ բարեկամի մօտ, որպէս զի անդադրում հոգածութեամբը իւր սեփական տանջանքներն ամոքէ։

## VI

Մի անգամ աշնանալին մի տաք երեկոյ երկու ընտանիքներն ևս նստած էին տան առաջ փոքրիկ հրապարակի վրայ և զուարճանում էին աստղալից երկընքով, որի խորին կապուտակը կապտին էր տալիս և հըրհրատում։ Կոյրը, ըստ սովորականին, ընկերուհու հետ իւր մօր կողքին էր նստած։

Մի առ վալրկեան բոլորն էլ լռել էին։ Ապարանքի շուրջ բոլորովին լուռ էր. միայն ժամանակ առժամանակ տերեւներն զգաստութեամբ սթափուելով, քրթմնջում էին անմեկին և անմիջապէս լռում։

Այդ միջոցին մի ասուպ, մուք կապուտակի խորքում որտեղից որ էր պոկ եկաւ և պայծառ շերտ կազմելով անցաւ երկնքի երեսովն ու խաղաղ հանգաւ՝ առվալրկեան մի իւր ետևից ֆոսֆորալին հետք թողնելով։ Բոլորն էլ աչքերը վեր բարձրացըրին։ Մալը, որ Պետ-

ըիկի հետ ձեռք ձեռքի տուած նստել էր, զզաց, թէ  
ինչպէս նա սթափուեց ու ցնցուեց:

—Այդ բնչ... էր, —հարցրեց նա մօրը վրդովուած  
դէմքով:

—Աստղ էր, վայր ընկաւ, զաւակս:

—Այո՛, աստղ էր,—մտախոհ աւելացրեց տղան: —  
Հէնց ալդպէս էլ կարծում էի:

—Ուտեղից կարող էիր այդ իմանալ, զաւակս,—  
հարցրեց մարը և նրա ձախի մէջ տխուր կասկածանք  
էր արտայայտում:

—Ո՛չ, նա ուղիղ է ասում,—մէջ մտաւ էւելինան:  
—Նա շատ բան „հէնց ալնպէս“ գիտէ:

Կոյրի մէջ այս աւելի ու աւելի զարգացող զգաս-  
տութիւնն արդէն ապացուց էր, որ նա նկատելի կեր-  
պով մօտենում է մանկութեան և պատանեկութեան  
միջև եղած տագնապալից տարիքին: Բայց նրա աճե-  
լութիւնը դեռ ևս խաղաղ էր կատարում: Մինչև ան-  
գամ թւում էր, թէ նա արդէն ընտելացել է իւր վի-  
ճակին, և նրա տարօրինակ կանոնաւրուած թախիծը,  
—թէպէտ և առանց լուսանցքի, բայց և առանց սուր  
արտայալտութեան,—որ նրա կեանքի սովորական կը-  
նիքն էր կազմում, այժմ մեղմացել էր փոքր ինչ:  
Բայց դա լոկ ժամանակաւոր խաղաղացման շրջան էր:  
Բնութիւնը կարծես դիտմամբ է այդ հանգիստը շնոր-  
հում,—այդ միջոցին նորատի մարմնակազմը հաստա-  
ւում է և ամրանում նոր փոթորիկի հանգէպ: Այդ  
խաղաղացմանց միջոցին նորանոր հարցումներ են հա-  
ւաքւում ու հասունանում: Մի դրդումն—և բոլոր հո-  
գեկան հանգիստը մինչի խորը կտատանուի, տակն ու  
վրայ կը լինի, որպէս ծովը՝ յանկարծահաս ալեկոծու-  
թեան բաշխումներից:



Ե. ԳԼՈՒԽ.

I

Ալսպէս մի քանի տարի էլ անցաւ:

Խաղաղ ապարանքում ոչինչ չփոխուեցաւ: Դարձեալ հաճարքենիները առաջուալ նման շաշում էին պարտիզում, միայն նրանց սաղարթը կարծես թէ աւելի մթագնած, աւելի խտացած լինէր, դեռ էլի սպիտակին էին տալիս հրապուրիչ պատերը, միայն այժմ նըրանք թեթևակի ծոռուել ու նստել էին. առաջուալ նըման խոժոռած նալում էին լարդեալ երդիկները. նոյն իսկ Խօխիմի սրինգի ձայնը միևնուն ժամերին լսում էր ախոռից. միայն թէ այժմ ինքը Խօխիմն էլ, որ սպիտակել էր ու ապարանքում ծերացած մնացել էր ամուրի, աւելի գերադասում էր լսել կոլը պանիչի ածածը, — սրբնդ թէ դաշնամուր, ալդ միևնունն էր:

Մտկսիմն աւելի ևս ալեւորել էր: Պոպէլսկիներն ուրիշ զաւակ չունին, ուստի և կոլը անդրանիկը, առաջուալ պէս, դարձեալ կազմում էր այն կեդրոնը, որի շուրջ խմբուած էր ապարանքի ամբողջ կեանքը: Նրա պատճառով ապարանքը քաշուել-փակուել էր իւր նեղ շրջանի մէջ և բաւականանում էր իւր սեպհական խաղաղ կեանքով, որին միացել էր նաև հարեւան կապալառուի խրճիթի ոչինչ նուազ խաղաղ կեանքը: Եւ ալսպիսով Պետրոսը, որ արդէն պատանի էր դարձել, մեծացաւ որպէս ջերմանոցի ծաղիկ, պաշտպանուած հեռաւոր կեանքի կողմնակի խիստ ներգործումներից:

Նա, ինչպէս և առաջ, կանգնած էր ահագին խաւար աշխարհի կեդրոնում: Նրա վերեւը, նրա շուրջը,

ամեն կողմից պատաժ էր անստհման և անծալը խաւարը. զգաստ և նուրբ կազմուածքն ընդառաջում էր ամեն մի տպաւորութեան, նման առաձգաբար լարուած լարի, որ միշտ կազմ ու պատրաստ է դողդող հնչիւններ արձակելու: Կոլը տրամադրութեան մէջ յայտնապէս արտալայտւում էր այդ զգաստ սպասողութիւնը— նրան այնպէս էր թւում, թէ խաւարը հենց այն է իւր ձեռները մեկնելու է դէպի ինքը և իւր մէջ շարժելու է մի այնպիսի բան, որ թալկալիր նիրհում է հոգու մէջ և պատրաստ է զարթնելու:

Բայց ապարանքի արդէն ծանօթ տաղտկալի ու սովորական խաւարը աղմկւում էր միայն հին պարտիզիք քաղաքուշ շշունջով, որ անորոշ, օրօրող, հանգստաբեր խոկմունք էր ազգում: Հեռաւոր աշխարհի մասին կոյր պատանին լոկ երգերից, պատմութիւններից, գրքերից էր գաղափար կազմում: Պարտիզի մտախոհ շշունջով և ապարանքի առօրեալ հանգիստ կեանքով շրջապատուած, նա հեռաւոր կեանքի փոթորիկների ու ալեկոծումների մասին ուրիշների պատմածից էր տեղեկութիւն ստանում: Եւ այս ամենը նրան պատկերանում էր մի տեսակ կախարդական շամանդաղի միջից որպէս երգ, որպէս աւանդութիւն, որպէս հեքեաթ:

Կարծես թէ լաւ էր այսպէս: Մալը տեսնում էր, որ իւր որդու հոգին ասես պարսպով պաշտպանուած, նիրհում է մի տեսակ թէպէտ արհեստական, բայց հանդարտ, հմայական կիսաքունի մէջ ընկած: Եւ նա չէր ուզում խանգարել այդ հաւասարակշուութիւնը. վախենում էր այդ խանգարել:

Եվելինան, որ աննկատելի կերպով մեծացել ու կազմակերպուել էր, այս հմայուած հանգստի վրայ նայում էր իւր պարզ աչքերով, որոնց մէջ ժամանակ առ ժամանակ նկատւում էր տարակուսանքի, ապագալի-

վերաբերմամբ հարցի պէս մի բան, բայց ոչ երբէք ան-  
համբերութեան ստուերն անգամ։ Պոպելսկի-հայրը բո-  
լորովին կարգի էր ձգել կալուածքը, բայց այդ բարի  
մարդը իւր որդու ապագայի վերաբերմամբ ոչ մի հոգս  
չէր քաշում իհարկէ։ Նա սովոր էր տեսնել, թէ ինչ-  
պէս ամեն բան ինքն իրեն է կատարում։ Միայն Մակ-  
սիմն էր, որ իւր բնաւորութեան համաձայն, դժուա-  
րութեամբ էր տանում այդ հանգիստը, և այն որպէս  
մի ժամանակաւոր բան, որ ակամալ իւր նախագծի մէջն էր  
մտնում։ Նա անհրաժեշտ էր համարում մի առ ժամանակ  
թուլ տալ, որ պատանու հոգին հանգստանալ, ամրանալ, որ  
պէս զի կարող լինէր դիմանալ կեանքի խիստ շփմանը։

Մինչդեռ այնտեղ, այս դիւթական շրջանից դուրս  
կեանքը եռ էր գալիս, ալեկոծւում, աղմկւում։ Եւ ա-  
հա, վերջապէս, հասաւ ժամանակը և ծերունի դաս-  
տիարակը վճռեց քակտել այդ շրջանը, բանալ զերմոցի  
դուռը, որպէս զի դըսի օդի թարմ հոսանքը կարողա-  
նալ ներս խուժել։

## II

Որպէս առաջին փորձ քեռի Մակսիմն իւր մօտ  
հրաւիրեց իւր հին ընկերոջը, որ Պոպելսկու ապարան-  
քից 70 վերստ հեռու էր ապրում։ Մակսիմն առաջ էլ  
էր երեմն-երբեմն նրա մօտ գնում, բայց այժմ գի-  
տէր, Ստալրուչենկոյի մօտ հիւր են եկած նաև երի-  
տասարդներ, ուստի և նրան նամակ գրեց ու ամբողջ  
խումբը իւր մօտ հրաւիրեց։ Այդ հրաւէրը սիրով ըն-  
դունուեց։ Ծերուկները վաղնջուց բարեկամութեամբ  
կապուած էին իրար հետ, իսկ երիտասարդութիւնը դեռ  
չէր մոռացած Մակսիմ Եացենկոյի մի ժամանակ բա-  
ռական հռչակ վայելած անունը, որի հետ կապուած  
էին որոշեալ աւանդութիւններ ու լիշտակներ (տրա-  
գիցիա)։ Ստալրուչենկոյի որդկերանցից մէկն ուսանում

էր Կիւսի համալսարանի լեզուաբանական բաժնում, որ այն ժամանակներն ամենաընդունուած ճիւղն էր: Իսկ միւսը Պետերբուրգի երաժշտական բարձրագոյն դպրոցում երաժշտութիւն էր ուսումնասիրում: Նրանց հետ եկաւ նաև մի ջահել կադէտ, որը հարևան կալուածատէրերից մէկի որդին էր:

Ստաւրուչենկոն մի ալեոր, պնդակազմ ծերունի էր դազախի երկար ընչացքներով ու դազախի լայն շալ-վարով: Նա իւր թութունով լքցրած քիսան ու չիրուխը կախած ունէր գօտկից, խօսում էր միայն մալառոսերէն, և երբ անց էր կենում իւր երկու որդկերանց հետ մէկտեղ, որոնք հագած ունէին սպիտակ թիկնոց ու մալառոսական նիշշած շապիկ, հէնց իմանաս Գոգոլի Թարաս Բուլբան լինէր իւր որդկերանց հետ: Սակայն Գոգոլի հերոսին յատուկ ոոմանտիզմի <sup>1)</sup> հոտն անգամ չկար նրա վրայ: Ընդհակառակին, նա շատ լաւ գործնական կալուածատէր էր և միշտ եօլա էր գնացել իւր ճորտերի հետ, իսկ ալժմ էլ, ճորտութիւնը <sup>2)</sup> բար-

<sup>1)</sup> XVI դարի կիսում Ֆրանսիայում սկսուեց եւ ամբողջ Եվրոպայում տարածուելով ծաղկեցաւ կեղծ-կլասիկ ուղղութիւնը գրականութեան ու կեանքի մէջ. զբողներն աշխատում էին ըստ ամենայնի նմանուել հին յունական եւ հոռվմէտական հեղինակներին ոչ միայն ըստ ձեւի, այլ եւ ըստ բովանդակութեան, որ իրական կեանքի պահանջներին բոլորովին չէր համապատասխանում: XIX դարի սկզբին նաևս Գերմանիայում, ապա եւ միւս եւրոպական պետութիւնների մէջ սկսուեց մի նոր ուղղութիւն, ոոմանտիզմը, որ բողոք էր անցեալ դարու ուղղութեան դէմ: Այստեղ էլ զգացմունքն ու երեւակայութիւնը՝ շատ անգամ առողջ գատողութեան հակառակ, առաջին աեղն էր բռնում: Ֆրանսիայում այդ ուղղութիւնը արտայատուեց շատ խիստ կերպով՝ կեանքի բոլոր պայմանների մէջ, Բաւական է յիշել Վիկտոր-Հիւգոյի անունը, որ զօրեղ յեղափոխական էր կեանքի եւ գրականութեան մէջ: Ռուսիայում առաջին անգամ ոոմանտիզմը գրականութեան մէջ Փուկովսկին մըտցրեց:

<sup>2)</sup> Դարերի ընթացքում Ռուսիայի ազատ երկրագործ ժողովուրդը մի կողմից տնտեսական պայմաններից ստիպուած, միւս կողմից կալուածատէրներին չնորհուած արտօնութիւննե-

ձուելուց լետով, շատ լաւ էլ լարմարուել էր նաև նոր պայմաններին: Նա ճանաչում էր ժողովրդին, ինչպէս կալուածտտէրները ճանաչում էին իրեն, այսինքն նա գիտէր իւր գիւղի ամեն մի գիւղացուն, ճանաչում էր նրանց ամեն մէկի կովը և համարեա թէ գիտէր ինչքան աւելսրդ փող կայ գիւղացու քսակի մէջ:

Բայց եթէ նա բուլրախ նման իւր օրդկերանց հետ չէր ըմբշամարտում, դրա փոխարէն էլ անդադար և խիստ կատաղի վիճաբանութեան էր բռնւում նրանց հետ. ոչ ժամանակ էին հարցնում և ոչ տեղը: Ամեն տեղ, տանը լինէին թէ հիւր գնացած, ծերունու և երիտասարդների միջև ամենաչնչին պատճառով անվերջ վէճեր էին ծագում: Սովորաբար վէճը սկսում էր նըրանով, որ ծերունին ծաղրելով խալթում էր «Իդէալիստ պանիչներին». պանիչները տաքանում էին, ծերունին էլ էր տաքանում, և այդ ժամանակ բարձրանում էր մէսարսափելի աղմուկ, որի միջոցին երկու կողմն էր իւր փայլ ստանում էր:

Սա «հայրերի ու զաւակների»<sup>1)</sup> միջև եղած լայտնի անհամաձայնութեան արձագանքն էր. միայն ալդ երեսլին այստեղ աւելի մեղմ ձեռվ էր արտալայտում:

---

Ի պատճառով բոլորովին ճորտ, ստրուկ, մարդկային ամեն մի իրաւունքից զրկուած մի էակ դարձաւ այն անձի ձեռքը, որի հողի վրայ ասլրում էր: Այդ բանը մանաւանդ օրինական հաստատութիւն ստացաւ 1592 թ. սկսած եւ ապա քանի գնաց զարդացաւ: Մալասոսիայում ճորտութիւնը մտաւ միայն 1783 թ. մայիսի 3-ի օրէնքով: XVII դարու վերջում եւ XVIII-ի սկզբում առաջին անգամ ձայներ լսուեցան գիւղացիների օգտին. եւ ժամանակի ընթացքում նրանց տրուեցան շատ մասնաւոր իրաւունքներ մինչեւ որ 1861 թ փետր. 19-ին երջ. Աղէքսանդր II կայսրը բոլորովին վերացրեց ճորտութիւնը ամբողջ Ռուսաց պետութեան միջից: Այնուհետեւ գիւղացիների մարդկային իրաւունքները տարէ ցտարի ընդարձակուեցան, Ծ. Թ.

<sup>1)</sup> Հայրերի ու զաւակների, այսինքն հին եւ նոր սերնդի հայեացքների տարբերութեան չնորհիւ ծագած անհամաձայնութեանց պատճերը նկարագրուած է յայտնի վիպասան Տուրքենկի „Օգու և Ջնտի“ (Հայրերն ու զաւակները) վէպի մէջ: Ծ. Թ.

Երիտասարդները մանկութիւնից ուսումնաբան տրուած լինելով, միայն արձակուրդի կարճ միջոցին էին գիւղի երես տեսնում, ուստի և նրանք շօշափելի կերպով չեին ճանաչում ժողովուրդը, ինչպէս այդ ճանաչում էին հայր-կալուածատէրները։ Այն միջոցին, որ հասարակութեան մէջ բարձրացաւ «ժողովրդասիրութեան», ալիքը, երիտասարդները գիմնազիօնի բարձր դասարաններումն էին գտնուում. և նրանք սկսան ուսումնասիրել ժողովրդագութը. բայց այդ ուսումնասիրութիւնը գրքերից ըսկասն։ Խոկ երկրորդ քայլն արին սկսելով ուսումնասիրել «ժողովրդի ոգու» արտադրութիւնները՝ նրա ստեղծագործութեան մէջ։ Այն ժամանակները Հարաւ-Արև-Ճառեան Ռուսիայում խիստ սովորական բան էր տեսնել պանիչներին սպիտակ թիկնոցով և նշխած շապիկ հագած ժողովրդի մէջ շրջելիս։ Տնտեսական պայմանների ուսումնամիջութեան վրայ առանձին ուշադրութիւն չեին դարձնում։ Պանիչները գրի էին տոնում ժողովրդական տաղերի ու երգերի բառերն ու եղանակները, ուսումնասիրում էին տաշնդութիւնները, համեմատում էին պատմական փաստերն ու ժողովրդի լիշտութեան մէջ դրանց թողած հետքերը. առ հասարակ գիւղացու վրայ նայում էին ազգայնական ռոմանտիզմի բանաստեղծական հայեացքով։<sup>1)</sup> Ասենք այդ բանը շատ խորթ չէր նաև ծերանիների համար, բայց և այնպէս երբէք չեին կարողանում երիտասարդների հետ մի որևէցէ համաձայնութեան լանգել։

— Դէ մի դրան լսիր, — ասում էր Ստաւրուչենկոն նենգաբար արմուկով Մակսիմին հրելով, երբ ուսու-

<sup>1)</sup>) Ռոմանտիզմը ռուսաց կեանքի մէջ արտայայտուեցաւ նեաւ ազգայնական ուղղութեամբ, որի մէջ սլաւանասէրները իրենց ամբողջական տեսութեամբ առաջնակարգ դեր խաղացին։ Նրբ Պետրոս Մեծը հսկայական հարուածով խորտակեց Ռուսիան Արեւմտեան Նւրոպայից անջատող պատնէշը, գիտութեան հոսանքը յորձանք տուաւ դէպի Ռուսիա եւ օտարազգի

նողը բոցավառ դէմքով և հրացալու աչքերով ճամարտակում էր: — Տես, շան լակոտը, ո՞նց որ գըում է, այնպէս էլ խօսում...: Հէնց գիտենաս դըուստ որ գիտնական լինի: Բայց հապա, խելօք զաւակս, մի պատմես, թէ ո՞նց էր իմ նեչիպորս քեզ խաբել...: Հը...:

Ծերունին շօլում էր իւր բեխերը և զուտ-խախուլական հեգնութեամբ մի յարմարաւոր դէպք պատմելով, քրքչում, Պատանիները կարմրում էին, բայց էրենք էլ յետ չէին մնում: «Եթէ նրանք ալսինչ գիւղացի նեչիպորին կամ Խվէդկոյին չեն ճանաչում, դըափոխարէն ամբողջ ժողովուրդն են ուսումնասիրում նրա կեանքի ընդհանուր արտադրութիւններով. նրանք խընդրին նայում են ամենաբարձր հայեցակէտից, որով միայն հնարաւոր է եղրակացութիւններ և գաղափարեցնդհանուր միաւորութիւն առաջ բերել. նրանք մի հայեցքով պարփակում են հեռաւոր պարզանկարները (պերսպեկտիվ) <sup>1)</sup>, մինչդեռ հին և սոսկական կեանքի

---

դաստիարակների աղդեցութիւնը գերակիր. հանդիսացաւ, ուստական միաբը ստրկութեան աստիճանի ճնշուած էր: Ակսուեցան բողոքներ եւ դարուս 30 ական թուերին ծնունդ առաւ սլաւեանասիրութիւնը, որ 40—50-ական թուերին ծաղկելով կամաց-կամաց ծայրահեղութիւնների մէջ ընկաւ, մասերի բաժանուեց եւ անհետացաւ: Սլաւեանասէրների գաղափարի հիմնաքարը կազմում է ժողովրդի ոգու ուսումնասիրութիւնը՝ քաղաքական, հասարակական, կրօնական, մտաւոր, հոգեկան եւ լեզուի արտադրութեամբ: Խակ դրա համար անհրաժեշտ էր մտնել ժողովրդի մէջ: Սլաւեանասէրներին չափոք է շփոթել համասլաւեանականների հետ, որոնք ձգտում են բոլոր պատեան ցեղերի միութեան:

Մ. Թ.

<sup>1)</sup> Պերսպեկտիւ խօսքի հայերէնը չունինք. մաթեմատիքական պերսպեկտիւն ուսուցանում է տափարակի վրայ կանոնաւորապէս զետեղել առարկայի գծերն ու կէտերը: Խակ օդային պերսպեկտիւը սովորեցնում է այն կանոնները, որի համաձայն առարկաները փոփոխութեան են ենթարկում իրենց գծագրութեան եւ լոյսի ու գոյնի սաստկութեան կողմից: Պերսպեկտիւ բառը գործ է ածում շատ տեղ փոխաբերական մըաքով որպէս կանոնաւոր, համաչափ, բոլոր մասերի համապատասխան տեսութիւն, նկար:

Մ. Թ.

մէջ փտած գործնական մարդիկ ջաղացը թողած չախ-  
չախի ետևիցն են ընկած»:

Սակայն ծերունու համար անհաճոյ չէր նաև որդ-  
կերանց խորիմաստ ճառերը լսել:

— Իսկոյն երեսում է, որ զուր չեն ուսումնաբա-  
նում սովորել, — ասում էր նա ինքնագոհ կերպով ուն-  
կնգիրներին նայելով: — Բայց և այնպէս պէտք է ա-  
սեմ, որ իմ Խվեգիսս ձեզ երկսիդ էլ ջուրը կտանէ,  
ծարաւ յետ կը երէ, ալ թէ ինչ...: Իսկ ես, հըմ, ես  
նրան, այդ սատանի պոշին, քիսիս մէջ կլոխեմ ու ջէրո  
կդնեմ...: Ասել է որ դուք էլ միւնոյնն էք իմ առա-  
ջըս, ոնց որ լակոտները քաւթառ շան առաջ:

### III

Հէնց ալժմս էլ նոր էր ալդպիսի վէճերից մէկը  
խալացել: Մեծերը գնացին ներս և բաց պատուհան.  
Ներից ժամանակ առ ժամանակ լսում էր, թէ ինչովէտ  
Ստաւրուչենկոն յաղթական եղանակով զանազան ծի-  
ծաղաշարժ դէպքեր էր պատմում, իսկ ունկնդիրներն  
ուրախ-ուրախ ծիծաղում:

Երիտասարդները պարտիզում մնացին: Ուսանողը  
իւր թիկնոցը փռեց տակը, գլխարկը յետ քաշեց  
ու մի տեսակ դիտաւորեալ ազատ ձեռով ձգուեցաւ  
արօտի վրայ: Նրա մեծ եղբայրը թումբի վրայ նըս-  
տած էր Եվելինայի կողքին: Կաղետը, իւր հա-  
մազգեստի բոլոր կոճակները կարգին կոճկած, տե-  
ղաւորուել էր նրա մօտ, իսկ փոքր ինչ հեռու,  
պատուհանի գիստին յենած, գլուխը քաշ նստած  
էր կոլը, — նա մտածում էր հէնց նոր դադարած վէ-  
ճի մասին, որ խորապէս յուզել էր իրեն:

— Դուք ինչ էք կարծում այն ամենի մասին, պան-  
նա Եվելինա, որ խօսուեց ալստեղ, — հարցըց երիտա-  
սարդ Ստաւրուչենկոն իւր հարեւանուհուն. — կարծեմ  
դուք ոչ մի խօսք չասացիք:

— Ալդ ամենը շատ լաւ էր, ալսինքն ալն, ինչ որ  
Զեր հօրն ասացիք: Միայն...

— Միայն... ի՞նչ:

Աղջիկն անմիջապէս զպատասխանեց: Նա ձեռա-  
գործը դրեց ծնկներին, ձեռքով շօլեց վրալից և գլու-  
խը թեժեակի խոնարհելով, սկսաւ մտախոհ կերպա-  
րանքով նալել դրան: Դժուար էր հասկանալ, թէ ար-  
դեօք իւր պատասխանն էր մտածում, թէ ալն, որ  
հարկաւոր էր գործուածքի համար փոքր ինչ աւելի  
խոշոր նխշացանց առնել:

Իսկ երիտասարդներն անհամբերութեամբ նրա պա-  
տասխանին էին սպասում: Ուսանողը բարձրացաւ ար-  
մուկների վրալ և իւր հետաքրքրութիւնից կենդանա-  
ցած գէմքը աղջկալ կողմը դարձրեց: Եվելինալի հորե-  
ւանն իւր խտղաղ, փորձող հալեացքն լառել էր նրա  
վրայ: Կոյը փոխեց իւր ազատ դիրքը, շտկուեցաւ և  
գէմքը խօսակիցներից շուռ տալով գլուխն առաջ ձգեց:

— Բայց, — կամացուկ տսաց Եվելինան կրկին իւր  
գործուածքը շինով, — ամեն մարդ, պարոններ, այս  
կեանքի մէջ իւր ճանապարհն ունի:

— Տէր Աստուած, — խստութեամբ ասաց երիտասար-  
դը, — Ի՞նչ խեմութիւն: Բայց Դուք քանի տարեկան  
էք իսկապէս, սիրուն պաննու հիկ:

— Տասնեօթ, — պատասխանեց աղջիկը պարզ կերպով  
և իսկոյն էլ միամիտ — յաղթական հետաքրքրութեամբ  
հարցրեց: — Իսկ Դուք կարծում էք ուելի եմ, այնպէս չէ:

Երիտասարդները ծիծաղեցան:

— Եթէ Զեր տարիքի մասին ինձ հարցնէին, — ա-  
սաց նրա հարեանը, — խիստ պիտի տատանուէի տաս-  
ներեք և քսաներեք տարիքի միջև: Ճիշտ եմ ասում,  
երբեմն Դուք բոլորովին երեխալի էք նմանում, բայց  
դատողութիւն էք անում խելացի պառիկի նման:

— Լուրջ խնդիրներում, Գաւրիլո Պետրովիչ, լուրջ

Էլ պէտք է գատել, — վարդապետական եղանակով ասաց  
փոքրիկ կինը կրկին աշխատանքը ձեռք առնելով:

Առ վայրկեան մի բոլորն էլ լուցին: Եվելինայի  
ասեղը կրկին համաչափ շարժում էր նիշշացանցի վը-  
րայով, իսկ երիտասարդները հետաքրքրութեամբ դի-  
տում էին խոհեմ աղջկալ փոքրիկ պատկերը:

#### IV

Եվելինան, ի հարկէ, Պետրոսին առաջին անգամ  
հանդիպելուց լետոյ յայտնի կերպով մեծացել ու կադ-  
մակերպուել էր, բայց նրա կերպարանքի վերաբերմամբ  
ուսանողի արած նկատողութիւնը բոլորովին ուղիղ էր:  
Առաջին անգամ այս փոքրիկ, նիհարկեկ աղջկալ վրայ  
նայելիս թւում էր, թէ դա դեռ փոքրիկ աղջիկ է, բայց  
նրա համաչափ ու կանոնաւոր շարժուածքների մէջ  
շատ անգամ հասուն կնոջ լրջութիւն էր արտայատ-  
ւում: Նոյն տպաւորութիւնն էր անում նաև նրա դէմ-  
քը: Կարծեմ միայն սլաւեան կանալք են ալդպիսէ  
դէմք ունենում: Կանոնաւոր, գեղեցիկ գիմագծերը  
որոշուում են կանոնաւոր, սառն գծերով, կապուտ  
աշքերը նայում են միապաղադ, անդորր, կարմ-  
ըութիւնը հազիւ է երևում այդ դժգուն այտերի վրայ,  
բայց դա այն սովորական դժգունութիւնը չէ, որ ամեն  
մի ըոպէ պատրաստ է կիզիւ կրքի բոցով վառուելու, —  
դա աւելի ձիւնի սառն սպիտակութիւնն է: Եվելինայի  
ուղիղ ձգուած շէկ մագերը հազիւ զոկում էին մար-  
մարեալ քունքերի վրայ, և ծանր ծամ հիւսուած ընկել  
էին ետեղ, որի ծանրութիւնից, ման գալու միջոցին,  
նրա գլուխն ասես թէ լետ էր թեքում:

Կոլը նոյնպէս մեծացել էր ու այրացել: Ով որ  
այդ միջոցին նայէր նրան լիշեալ խմբից ալդպէս հե-  
ռու նստած՝ յուզուած ու գեղեցկատեսիլ՝ իսկոյն կնկա-  
տէր այդ ինքնատիպ դէմքը, որի վրայ այնքան տկն-

յայտնի կերպով արտափալլում էր հոգեկան ամեն մի շարժում։ Սև մազերը գեղեցիկ ալիքներով կախուած էին դուրս ընկած ճակատի վրայ, որ վաղաժամ կնճռուներով էր պատաժ։ Այսերի վրայ արագութեամբ բռցավառում էր թանձր կարմրութիւնը և նոյնպէս արագութեամբ էլ սփռուում էր կաթնագոյն դժգունութիւնը։ Ներքին շրթունքը, որի անկիւնները հազիւնկատելի կերպով ներքեւ էին քաշուած, ժամանակ առ ժամանակ ջղածգաբար ցնցւում էր տարօրինակ կերպով, յոնքերը զգաստօրէն լարւում էին և շարժւում, իսկ խոշոր, գեղեցիկ աչքերը, որոնք նայում էին միապազար և անշարժ հայեացքով, երիտասարդի դէմքին մի տեսակ ոչ բոլորովին սովորական մռալլ գոյն էին տալիս։

— Ուրեմն, — ծաղրական եղանակով տսաց երիտասարդը մի փոքր լռելուց լետոյ, — պաննա Եվելինան կարծում է, թէ այն ամենը, ինչ որ մենք ալստեղ խօսեցինք, կնոջ խելքին անմատչելի է, թէ կնոջ բաժինը — մանկանոցի ու խոհանոցի նեղ շրջանն է։

Երիտասարդի ձայնի մէջ զգացւում էր ինքնագութիւն (այդ ժամանակներն ալդպիսի բառերը գեռքուրովին նոր էին) և վէճի բռնուելու հեգնութիւն։ մի քանի րոպէ ամենքն էլ լռեցին և ջղալին կարմրութիւնը պատեց աղջկալ դէմքը։

— Եատ էք շտապում Զեր եղրակացութիւններն անելու, տսաց նա։ — Ես ալստեղ խօսուածը ամենքն էլ հասկանում եմ. ուրեմն կնոջ խելքին մատչելի է դա։ Խօսքս իմ անձի վերաբերմամբ էր միայն։

Նա լռեց և գլուխը քաշ գցեց իւր ձեռագործի վրայ մի այնպիսի ուշադրութեամբ, որ երիտասարդն ալլ ևս սիրտ չարեց իւր հարցերը շարունակելու։

— Զարմանալի է, — մրթմրթաց նա, — կարելի է կաբծել, թէ դուք արդէն իսկ չափած ու ձևած լինիք Զեր ամբողջ կեանքը մինչի գերեզման։

— Ի՞նչ զարմանալու բան կալ ալստեղ, Գաւըլու

Պետրովիչ, — ցած ձայնով պատասխանեց օրիորդը. — կարծում եմ, որ Իլիա Խվանիչն անդամ (կաղետի անուննէ) պէտք է գծագրած լինի իւր ուղին. իսկ նո հօ ինձանից երիտասարդ է:

— Ուղիղ է, — ասաց կադէտն ալդ հրաւէրից գոհ մնալով: — Դեռ մօտերքս կարդացի ն-ի կենսագրութիւնը: Նո էլ որոշ նախագծով էր գործում. — քսան տարեկան ամուսնացաւ, իսկ քսան հինգ տարեկան ժամանակն արդէն զօրաբաժնի հրամանատար էր:

Ուսանողը նենդամտութեամբ ծիծաղեց. աղջիկը թեթևակի շառագունեցաւ:

— Ա՛յ, տեսնում էք, — մի րոպէից ասաց Եվելինան ձալնի մի տեսակ պաղ խստութեամբ, — ամեն մարդ իւր ճանապարհն ունի:

Այլ ևս ոչ ոք չհականառեց: Երիտասարդների խմբի մէջ տիրեց լուրջ լուռութիւն, որի մէջ ակնլայտնի պարզութեամբ զգացւում էր տատամսոտ երկիւղ, — ամենքն էլ նսեմ կերպով հասկացան, որ խօսքը անձնական նուրբ կէտի էր հասել, որ ալդ պարզ խօսքերի տակից հնչում էր մի ինչ որ տեղ զգաստ ձգուած լար...:

Եւ այս լուռութեան մէջ պարզ լսւում էր միայն մթագնող և, ասես թէ մի բանից դժգոհ, հինաւուրց պարտիզի սօսաւիւնը:

## V

Այս բոլոր խօսակցութիւնները, այս վէճերը, այս եռուն, թարմ հարցապնդումների, լուսերի, ակնկալութիւնների և կարծիքների ալիքը՝ այս բոլորն անակընկալ ուժգին հօսանքով խուժեցին կոյրի վրայ: Սկզբում ոգեսորուած զմալլման արտայալտութեամբ ականջ էր դընում նրանց, բայց նա շուտով նկատեց, որ ալդ կենդանի կոհակը անց է կենում իւր մօտով, որ դա ոչ մի առնչութիւն չունի իւր հետ. իրեն հարցեր չէին տալիս, իւր կարծիքը չէին հարցնում. տեսաւ, որ ինքը

կանգնած է մենակ մի տեսակ տիսուր առանձնութեան մէջ: Եւ ալդ առանձնութիւնն աւելի ևս տիսուր էր թւում մանաւանդ ալժմ, երբ կեանքը աղմկալից էր անցնում ապարանքում:

Բայց և այնպէս նա շարունակում էր ականջ գնել այն ամենին, որ ալսքն նոր էր իրեն համար, և նրա խիստ կիտուած լոնքերը, դժգոյն դէմքն ուժգին ուշադրութիւն էին արտալայտում: Բայց մռայլ էր ալդ ուշադրութիւնը. մտքի ծանր և դառն աշխատանք էր թագնուած նրա տակ:

Մայրը տիրամած աչքերով նայում էր իւր որդուն: Էւելինայի աչքերը կարեկցութիւն և անհանգստութիւն էին արտալայտում: Միայն Մակսիմն էր, որ կարծես չէր նկատում, թէ ինչ տպաւորութիւն է գործում կոյրի վըալ այս աղմկալի հասարակութիւնը, և հիւրերին սիրածօժար հրաւիրում էր լաճախակի ալցելել ապարանք՝ երիտասարդներին խոստանալով, որ միւս անգամ նրանց համար ազգագրական հարուստ նիւթ պատրաստած կլինի:

Հիւրերը խոստացան նորից գալ և գնացին: Մնաք բարե ասելիս երիտասարդները սրտագին թոթւում էին Պետրոսի ձեռքը: Նա ուժգնութեամբ պատասխանում էր նրանց ձեռք սեղմելուն, և երկար ժամանակ ունկընդրած լսում էր, թէ ինչպէս հեռացող կառքի անիւները դզրդում էին ճանապարհին: Յետոյ նա արագութեամբ շուռ եկաւ և հեռացաւ-գնաց պարտէզ:

Հիւրերի գնալուց յետոյ ապարանքում ամեն բան խաղաղեց. բայց ալդ խաղաղութիւնը կոյրին մի տեսակ առանձին, անսովոր և տարօրինակ էր թւում: Ասես թէ ալդ անդորրութեան մէջ զգացւում էր, որ ապարանքում մի շատ նշանաւոր բան էր կատարուել: Լուռ ծառուղիներում, ուր միայն հաճարիքն ու եասամանիքն էին շշնչում, կարծես կոյրը դեռ լսում էր հէնց նո-

բերս եղած խօսակցութիւնների արձագանքը. բաց պատուհանից նրա ականջին հասնում էր, թէ ինչպէս մալրնու Եվելինան ընդունարանում մի բանի մասին վիճում էին Մակոմի հետ. Մօր ձայնի մէջ աղերս և տանջանք նկատեց նա: Եվելինայի ձայնը զալրով. էր արտայալտում, իսկ Մակոմը կարծես կրքով, բայց անյողդողդ կերպով լետ էր մզում կանանց յարձակումը: Պետրոսի մօտենալուն պէս ալդ խօսակցութիւններն անմիջապէս դադարում էին:

Մակոմը գիտակցաբար, անխնալ հարուածով բաց արաւ առաջին խրամատն այն պարսպի մէջ, որ մինչեւ ալժմ շրջապատել էր կոյրի աշխարհքը: Առաջին աղմկալի և խռովալոյզ կոհակն արդէն յորձանք էր տուել ալդ խրամատի միջով. և ալդ առաջին հարուածի ուժգին ընդհարումից դողդողաց պատանու հոգեկան հաւասարակութիւնը:

Ալժմ նրան նեղ էր գալիս իւր հմայական շրջանը: Նրան տաղտուկ էր ազգում ապարանքի անդորրութիւնը, հնաւուց պարտիզի ծոյլ սօսաւիւնն ու շշուկը, պատանեկան հոգու միահանգոյն քունը: Խաւարը թոփում էր նրան իւր նոր գիւթեական ձայններով և գրաւիչ կենդանացման անձկալի իրարանցմամբ խռնուելով տարուբերում էր նրա առաջ և նոր, անմեկին պատկերներ ձևակերպում:

Խաւարը կանչում էր նրան, հրապուրում, նրա հոգու մէջ նիրհած հրցապնդումները զարթեցնում. և ալդ առաջին հրաւէրի հետեւանքը եղաւ արտաքուստ նրա դէմքի դժգունութիւնը, իսկ հոգու մէջ—բութ, թէպէտ դեռ անորիշ տանջանքը:

Ալս չարագուշակ նշանները չվրիպեցան կանանց աչքից: Մենք, աչք ունեցողներս, ուրիշների հոգեկան շարժումների արտայալտութիւնը տեսնում ենք նրանց դէմքի վրայ, ուստի և սովորում ենք ները թագցնել:

Կոյրերն ալդ կողմից բոլորովին անպաշտպան են, ուստի և Պետրոսի դժգուն դէմքի վրայ կարելի էր պարզ կերպով կարդալ նրա հոգեկան լոլզերը, որպէս մի մասնաւոր լիշտակարանի մէջ, որը մոռացութեամբ բացած թողել են ընդունարանում...: Պետրոսի դէմքի վրայ չարատանջ լուզմունք էր գրուած: Կանալք տեսնում էին, որ Մակսիմը նոյնպէս նկատում է ալդ և այս ամենը մտնում է ծերունու ծրագրի մէջ: Նրանք երկուսն էլ քարասրտութիւն էին համարում ալդ, և մայրը կցանկար իւր ձեռներով պաշտպանել իւր զաւակին: «Ճերմանոց, — ինչ վնաս, եթէ իւր զաւակը մինչև այժմ երջանիկ էր ալդ ջերմանոցում: Թող ալդպէս լինի նաև այսուհետեւ»: Խսկ Եվելինան, ըստ երևութիւն, չէր արտալալտում այն բոլորը, որ կուտակուած էր իւր հոգու մէջ. բայց ահա քանի ժամանակ է, որ նա իւր լարաբերութիւնը դէպի Մակսիմը փոխել էր և մի անսովոր խստութեամբ սկսել էր ընդդիմանալ Մակսիմի մի քանի, երբեմն բոլորովին չնչին առաջարկութիւններին:

Ծերունին աչքի տակից փորձող հայեացքով նայում էր նրան և երբեմն հանդիպում էր նորատի աղջկալ ցասկոտ և հրհրատող աչքերին: Մակսիմը շարժում էր գլուխը, քթի տակ մի քան մըթմըթում և իրեն շըջապատում էր ծուխի առաւել և խիտ բարդերով, որը նշան էր նրա մտքի լարուած աշխատութեան. բայց նահաստատ կանգնած էր իւր տասածի վրայ և ժամանակ առ ժամանակ, առանց լատկապէս ոք մինին դիմելու, արհամարհական ակնարկներ էր անում կանանց անխոհեմ սիրոյ և կանացի կարճ խելքի մասին, որը, ինչպէս ցայտնի է, անհամեմատ կարճ է լինում նրանց մազից, ուստի և կինը բոպէական տանջանքից ու բոպէական ուրախութիւնից հեռուն չէ տեսնում:

— Թուխս եկած հաւ ես դարձել, — ասում էր նա.

երբեմն քրոջը՝ բարկութեամբ իւր անժացուալերով յատակը թրիկացնելով....:

Բայց նա շատ հազիւ էր բարկանում, մեծ մասամբ քրոջ փաստերին պատասխանում էր մեղմ և ներողամիտ ցաւակցութեամբ, մանաւանդ որ քոյրն ամեն անգամ որ մենակ էր մնում, վիճաբանութեան մէջ միշտ զիջանում էր նրան. բայց այդ արգելք չէր, որ նա շուտով դարձեալ նորոգէր խօսակցութիւնը: Սակայն երբ վիճաբանութիւններին ներկալ էր լինում նաև Եվելինան, բանն աւելի ծանր կերպարանք էր ստանում: Այդպիսի դէպքում ծերունին աւելի լաւ էր համարում լուռ մընալ: Ասես թէ նրա և նորատի աղջկալ մէջ մաքառումն էր սկսուելու, և նրանք երկուսն էլ նոր նոր ուսումնամիրում էին հակառակորդին՝ աշխատելով մեծ խնամքով ծածկել իրենց զէնքերը:

## VI

Երբ երկուշաբաթից երիտասարդներն իրենց հօր հետ նորից եկան, Եվելինան սառն պնտարբերութեամբ ընդունեց նրանց: Բայց նրա համար դժուար էր չհամակուել այդ գրաւիչ և նորատի կենդանացմամբ: Երիտասարդներն ամբողջ օրերով թափառում էին գիւղի մէջ, որսի էին գնում, դաշտերում գրի էին առնում հնձուոր կանանց և տղամարդկանց երգերը, իսկ երեկոյեան ամբողջ խումբը հաւաքւում էր պարտիզում, ապարանքի պատի տակ շինուած թումբի վրայ:

Մի այդպիսի երեկոյ Եվելինան ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս եղաւ, որ խօսակցութիւնը դարձեալ նուրբ ինդիրների վրալ դարձաւ: Ինչպէս եղուալդ, ով էր առաջինը սկսողը—ոչ Եվելինան և ոչ էլ մէկ ուրիշը կարող էր ասել այդ: Որպէս աննկատելի կերպով հանդել էր վերջալոյսը և երեկոյեան ստուերներն սկսել էին սո-

դոսկալ պարակղի մէջ, որպէս աննշմարելի եղանակաւ սո-  
խակը իւր երեկոյեան երգն էր սկսել թփերի միջից, այդ-  
պէս աննկատելի կերպով կատարուել էր նաև այդ բանք:

Ուսանողը խօսում էր բորբոքուած, պատանեկական  
այն բուռն աշխուժով, որ առանց կշռադատութեան, ա-  
ռանց մտածելու ընդառաջ է սլանում դէպի անլայտ ա-  
պագան: Մի առանձին դիւթական ոլժ, կոչի համարեա  
մի անընկճելի ոլժ կար դէպի ապագան և նրա հրա-  
շալիքները տածած այդ հաւատի մէջ:

Նորատի աղջիկը լուզուեց հասկանալով, որ այդ կոչը,  
գուցէ առանց գիտակցական հաշուի, այժմ անմիջապէս  
դէպի իրեն էր ուղղուած:

Նա լսում էր՝ գլուխը ցած խոնարհած ձեռագործի  
վրայ: Նրա աչքերը բոցավառեցան, դէմքը շառագունե-  
ցաւ, սիրտը բաբախում էր...: Ապա աչքերի փայլը հան-  
գաւ, զրժունքները սեղմուեցան, իսկ սիրտը սկսեց աւե-  
լի ևս ուժգին բաբախել, և ահի արտայալտութիւն երևաց  
նրա սպրդնած դէմքի վրայ...:

Եւ նա վախեցաւ, որովհետեւ կարծես յանկարծ իւր  
աչքերի առաջ քաշած խաւար պատը բաժանուեցաւ և  
այդ լուսաշաւղի միջից ցոլացաւ ընդարձակ, եռուն և  
գործօն կեանքի հեռաւոր հեռանկարը:

Այս, այդ աշխարհը վաղուց հրապուրում է նրան:  
Նա այդ առաջ չգիտէր, բայց հնաւուրց պարտիզի ստուե-  
րում, մեկուսացած նստարանի վրայ, ժամերով նստում  
էր նա անիրագործելի ցնորքների անձնատուր եղած: Ե-  
րեակալութիւնը նրա առաջ պատկերացնում էր պայծառ,  
հեռաւոր նկարներ, և գրանց մէջ կոյրը տեղ չունէր...:

Այժմ այդ աշխարհը մօտեցել էր իրեն. դա ոչ միայն  
հրապուրում էր, այլ և մի ինչ որ պահանջ էր անում:

Նա մի արագ հայեացք ձգեց Պետրոսի կողմը և մի  
բան խոցեց իւր սիրտը: Պետրոսը նստած էր անշարժ և  
մտախոհ. նրա ամբողջ կերպարանքն ասես թէ ծանրա-

ցած լինէր, և ալդ բանը մոալլ բծի նման գրոշմուեց նորատի աղջկայ լիշողութեան մէջ: «Նա... ամեն բան հասկանում է» կալծակի արագութեամբ անցաւ նրա մըտքովը, և աղջիկը մի տեսակ ցրտութիւն զգաց: Արիւնը սրաին խփեց, իսկ դէմքի վրայ ինքն էլ լանկարծական դժգունութիւն զգաց: Նրան մի առ վայրկեան թուաց, թէ ինքն արգէն այնտեղ, ալդ հեռաւոր, եռուն աշխարհումն է, իսկ Պետրոսն ահա հէնց այստեղ նստած է մենակ, գլուխը քաշ գցած. կամ ոչ... այնտեղ, բլրակի վրայ, գետի ափին է այն կոլը մանուկը, որի վրայ ինքն այն երեկոյեան լաց էր եղել...

Եւ նա զարգանդեց: Նրան այնպէս թուաց, թէ մէկը պատրաստւում է իւր հին վէրքի միջից դուրս քաշել գաշոյնը:

Նա լիշեց Մակսիմի երկար հայեացքները: Ահա թէ ուրեմն ինչ էին նշանակում ալդ լուս հայեացքները: Մակսիմն իրենից լաւ է գիտացել իւր տրամադրութիւնը. Նա հասկացել է, որ իւր սրտում դեռ ևս կարող է մաքառում, ընտրութիւն տեղի ունենալ, որ դեռ ինքն իւր վրայ վստահ չէ...: Բայց ոչ,—Մակսիմը սխալում է: Եւելինան հասկանում է իւր արած առաջին քալլը, իսկ լետոյ կտեսնէ, թէ դեռ ուրիշ ինչ կարելի է կեանքից վերցնել:

Նա ծանը և դժուար թառանչ քաշեց, կարծես դըժուարին աշխատանքից լետոյ շունչ առնելիս լինէր, և չորս կողմը նալեցաւ: Կարող չէր անել, թէ լուսութիւնը երկար ժամանակ է, որ տիրած էր, վաղուց էր ուսանողը լրել, այլ ևս ուրիշ բան խօսել էր...: Նա նայեցաւ այն կողմը, ուր մի վայրկեան առաջ նըստած էր Պետրոսը:

Բայց Պետրոսն այլ ևս իւր առաջուայ տեղում չկար:

Թարգմ. ՄՈՒԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ



# ՀՕՒՄԱՅ

## ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1896 թ. յունուարի 1-ից հրատարակում է Թիֆլիսում տարեկան երկու գիրք, բաղկացած 900—1000 երեսից և հետևեալ բաժիններով.—վիպական, տեղագրական, ազգագրական, մանկավարժական, առողջապահական, կենսագրական, պատմական, ժողովրդական, մատենախօսութիւն, այլեայլը և յաւելուած։

Առաջին գիրքը լոյս է տեսնում՝ յունուար 1-ին, երկրորդը՝ յուլիս 1-ին։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ  
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԳԻՐՔՆ ԱՌԱՆՉԻՆ 2 ՌՈՒԲԼԻ

Մինչև այժմ տպագրուել է 10 գիրք, որոնք լոյս են տեսել միշտ խոստացած ժամանակներին և երբեմն էլ ամսաշափ առաջ։

Բանալով «ԼՈՒՄԱՅ»-ի վեցերորդ տարուայ, այն է 1901 թուի բաժանորդագրութիւնը՝ խմբագրութիւնը յայտնում է, որ առաջիկայ տարի ևս նոյն ճշտութեամբ պիտի հրատարակուի, ինչպէս և անցեալ տարիները. նոյն ծաւալով և աշխատակիցների աւելի ստուար խմբի օգնութեամբ։

Հասցէն՝ *Տիֆլիս*, *Редакция „ЛУМА“* կամ *протоиерею Гюомуյ Аганъянց*.

Արտասահմանից՝ *Tiflis Archiprêtre Güt Aghaniantz, Redaction «Louma»*.

Ներկայ գիրքը լոյս տեսաւ յունիսի 15-ին